№ 280 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22

1906

ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 № 280

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տող տեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտագին սրտով Անթառամ Գասպարեան և Աբգար Միսաքեան Մելիք-Առաքելեանցները յայտնում են, որ առաջիկայ կիրակի, դեկտեմբերի 24-ին, առաւօտեան ժամը 10-ին, Բագու քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցում կը մատուցվի պատարագ, որից յետոյ ժամը 12-ին հոգեհանգիստ՝ առաջինի տագրը, իսկ երկրորդի հօրեղբօր որդի ի տէր հանգուցեալ

Աստրախանի թեմի առաջնորդ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ

(Մելիք-Առաքելեանց)

մահվան քառասնօրեակի առիթով։ 1—1

Կատինկա Զառաեանց, Եղիսաբէթ Թումեանց, Կարապետ Զառաեան, Մարթա Ջէյրանեան իր որդիներանցով ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր սիրելի ամուսնու, երկրորդը՝ անմոռանալի հօր, երրորդը՝ Թանկագին եղբօր, վերջիններն իրանց Թանկագին փեսայի՝

Յակոբ Արտեմիչ Զառաեանցի

մահը որ տեղի ունեցաւ կարճատև հիւանդութիւնից յետոյ դեկտեմբերի 20-ին ամփոփը տեղի կունենայ շաբաթ դեկտ. 23-ին, երեկոյեան ժամը 5-ին իր սեփական տանը, Мипiановская № 35։ Ցուղարկաւորութիւնն կիրակի ամսիս 24-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Խօջիվանքի գերեզմանատուն։

ԲԱՑՎԱԾ Է ՆԱԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է՝	Թիֆլիսում	4 ր.	Ուրիշ տեղեր՝		5 ր.։
Կէս տարվայ	» »	2 ր.	»	»	2 ր. 50 կ.
3 ամսվայ	» » »	1 ր.	»	»	1 ր. 25 կ.
1 ամսվայ	» » »	— 40 կ.	»	»	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 Թւին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ, 2) միջազգիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջազգիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) առ. 12—20

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։
2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։
3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։
4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։
5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպլէյեան

(ա. օ.) առ. 5—10

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսաախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սոլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (չ. ու. շ.) 23—100

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

քթի, կոկորդի եւ ականջի հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. / երեկ. 5—7 ժ. ամեն օր բացի ուրբաթ

Միխայլովսկի պրոսպ., տ. Ֆոլբերի № 11.

(կ. չ.) առ. 14—60

Երաժշտական բաժին—բարեհաճ մասնակցութեամբ տիկին Բալբաշեվսկայա, օրիորդներ Միխայլովսկայա, Պարենագօ և տիկին Սիրանոյշ. պարոնայք՝ Բիլշտէյն, Քափանակեան և Մերեմբլիւմ։

Երգեցիկ խումբ—պ. Գրիգոր Սիւնիի (Միրզոյեան) ղեկավարութեամբ։

Ազգային պարեր՝ ղեկավարութեամբ պ. Ա. Մանուկեանի, բեմի վրա։

Օրվայ չարիքի մասին կուպլետներ կարտասանէ դերասան Արաքսեան։

ՎԻՃԱԿԱԽԱՂ

Մեծ քանակութեամբ Թանկագին իրեր։
Պարահանդէսի միջոցին կը լինի կոնֆէտտի և սերպանտին։

ՊՕՍՏ

Գեղարուեստական քիօսկների և դահլիճների զարդարանքը կը լինի նկարիչ Ա. Ֆէթվաճեանի հսկողութեամբ.

ՊԱՐԵՐ

Պրօժեկտորի լուսաւորութեամբ և պ. Իննօչենցիի ղեկավարութեամբ։

ՎԵՐՋԸ ԿՕՏԻԼԻՕՆ

Դահլիճների լուսաւորութիւնը à jiorno.
Պարահանդիսային գործիաւոր նուագախումբ։
Արևելեան երաժշտութիւն—սազանդարներ, դուդուկ և Ախալցխայի երաժշտախումբ։
Համերգի սկիզբն է ուղիղ 8½ ժամին երեկոյեան
Հասարակութեանը խնդրում են շնորհ բերել ազգային զգեստներով։

առ. 1—1

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ՁՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. ըեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք. 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ }
Բժ. Կ. Ի ՁՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմ. մասսաժ, ելէքտր. 4—6 ժամ.

Մ. Ն. ԳՕՐՕԳԵՑՎԱ.—Մասսաժ. 11—4. ժ.

Ս. ԽԱ. ՊԱԻԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օր 4—5 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 30—144

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—Ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ն. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։

Մ. Պ. ԿԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Պ. Ա. ԲԷՅԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։

(օ. մ.) առ. ե. հ. կ. 4—100

Բագուի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը

յանձն է առնում տպագրել՝

1) Անպայման գեղարուեստական արժէք ունեցող հեղինակութիւններ, ինքնուրոյն և Թարգմանական։

2) Անպայման գիտական արժէք ունեցող հեղինակութիւններ, հասարակական, պատմական և բնական գիտութիւններին վերաբերեալ։

Թէ ինքնուրոյն և թէ Թարգմանական հեղինակութիւնների նիւթը պէտք է լինի մատչելի և հետաքրքրական ժողովրդի լայն խաւերի համար, իսկ լեզուն՝ կանոնաւոր, կոկ և գեղեցիկ։

Հեղինակները և Թարգմանիչները կը ստանան վարձ։

Աւելի մանրամասն պայմանները իմանալու համար դիմել՝ Баку, Совѣтъ съѣзда нефтепромышленниковъ, Е. Тагіаносянъ.

(ու. ե.) առ. 4—5

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Նոր դրամայի ընկերութիւնը

Ուրբաթ, դեկտեմբերի 22 ին

Արական I գիմնազիայի չքաւոր աշակերտների օգտին

կը ներկայացնի

„ԻՕԼԱ“

Պիեսը 4 գործ.

Սկիզբը երեկոյեան 8 ժամին։

(հ. ու.) առ. 2—2

Եղլախի կայարանում գտնվող

Գ. ՅՈՎՀ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ

կօմիսիօներական գրասենեակը ապրանքների պահեստատեղի որոնք անցեալ տարի Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ Թալանված ապրանքը գրասենեակի տիրոջ սեփականութիւն էր։

ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՎԵՐԱԲԱՑՎՈՒՄ Է

(ա. օ.) 2—5

Այսօր, դեկտեմբերի 22-ին

Լոյս տեսաւ

„ՀԱՅԵԼԻ“ յաւելուած

№ 2 ՀՕ՛Պ - ՀՕ՛Պ № 2

առ. 1—1

Դեկտեմբերի 26-ին Արտիստական Ընկերութեան դահլիճում կայանալու է յօգուտ ղարաբաղցիների սովեալների մի երեկոյթ շատ հետաքրքրական. բացի կօնցերտից, որտեղ կը մասնակցեն յայտնի երաժիշտներ և երգիչներ, կը լինի նաև Գ. Միրզոյեանի խումբը, հայկական պարեր, խօրէօ-գրաֆիական ներմուծութիւններով. և դահլիճները շքեղ զարդարված. կը նուագեն Մաշների օրկէստրը, սազանդար և աշըղ Ջիւանու նուագախմբերը։

առ. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Քայքայման դէմ մաքառում. Վերջին տեղեկութիւններ. Կուսակցութիւնների և դաշնակցութիւնների շուրջը. Մամուլ. Գանձակի շրջանից. Տեղեկութիւններ գաւառից. Դպրոցական առողջապահութիւն. Մէկ նոր լեռնական ընկերութիւն. Դպրոցներում. Վերջին հրահանգներն են. Թատրոն և երաժշտութիւն. Քաղուածքներ Թիւրքահայ մամուլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մառայլ պատկերներ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք անհրաժեշտ ենք համարում մեր ընթերցողներին տեղեկութիւն տալ մի գործի մասին։

Ինչպէս յայտնի է, այս տարի «Մշակի» հակառակորդները ամեն տեսակ միջոցներ գործ դրին վնասելու լրագրի բաժանորդագրութեանը ու տարածմանը, աշխատեցին բօյկօտներ կազմակերպել և ամեն տեսակ կեղծ լուրերով մոլորեցնել հասարակութիւնը։ Եւ, կարծելով որ իրանց դաւադրութիւնը հասել է նպատակի, սկսեցին հաւատացնել մարդկանց և հրատարակեցին, որ անձրևի նման յետ են Թափվում «Մշակի» խմբագրատուն լրագրի օրինակները։

Մեզ համար չափազանց զաւեշտական էին այդ հարայ-հրոցները, խանութպանական այդ խնդակցական հրճուանքները։ Զաւեշտական մանաւանդ այն պատճառով, որ մենք չէինք տեսնում ոչ մի Թղթատարափ, ոչ մի անձրև։

Անցել է այդ իրարանցման օրերից աւելի քան երկու ամիս, և այսօր ստիպված ենք մի մեծ ցաւ պատճառել «Մշակի» հակառակորդներին, յայտնելով որ նրանց գոռ արշաւանքը շատ փոքր արդիւնք է առաջացրել, նրանց սարը ծանր երկունքից յետոյ միայն մուկ է ծնել։

«Մշակի» բաժանորդներից ընդամենը հրաժարվել են միայն ինն հոգի։

«Մշակի» հակառակորդների խաթրը միայն ինն հոգու է կարողացել կոտրել։

Ինն հոգի։

Իսկ ո՞ւր մնացին այն սպառնալիքները, որոնցով մեր հակառակորդները ուրախացնում էին իրանց և Թմբուկներ զարկում։

Ինն հոգի։

Եւ այդ իննից չորսը Սեվաստոպոլից են, մի այնպիսի տեղից, ուր բնակված հայերը ոչ մի գաղափար չունեն մեր երկրի և մեր ցաւերի մասին։

Իսկ միևնոյն ժամանակ այդ իննի դիմաց մենք ունեցանք նոր համակրողների խմբեր, նոր բաժանորդներ։

Անշուշտ լրագրի բաժանորդագրութեան պակասելը մի վնաս է իւրաքանչիւր խմբագրութեան համար, և մենք չենք ցանկանում, որ մեր բաժանորդների Թիւը փոքրանայ, բայց պէտք է կտրական կերպով ընդգծենք, որ մեր գաղափարական մաքառումների ժամանակ մենք կանգ չենք առնի այդպիսի մի փոսի առաջ և երբէք չենք դաւաճանի մեր դաւանած սկզբունքներին։ Եթէ ինն չը լինէին լրագրից հրաժարվողները, այլ իննսուն ինն, այնուամենայնիւ ճշմարտութիւնը կը մնար ճշմարտութիւն և նրա քարոզը մեզ համար պարտաւորական։

Բարեբախտաբար, «Մշակի» հետ կապված ընթերցող հասարակութիւնն իր կոչման բարձրութեան վրա էր գտնվում և նա կարողացաւ գնահատել այն գործը, որին նուիրվել էինք մենք յանձն առնելով ամեն տեսակ նեղութիւն, զոհ ու զրկանք։

«Մշակը» և՛ իր անցեալում վկայ է եղել հակառակորդների անզօր փրփրումներին, կորցրել է մի երկու միամիտ և մոլորեալ բաժանորդներ։ Բայց գաղափարական մաքուր գործը առաջ էր գնում առանց կանգ առնելու։

Եւ այդպէս էլ կը գնայ առաջիկայում։

ՔԱՅՔԱՅՄԱՆ ԴԷՄ ՄԱՔԱՌՈՒՄ

VIII

Տնտեսական քայքայումը վտանգաւոր կերպարանք է ստացել, և եթէ նրա առաջը չառնենք մի շարք էական և ուժեղ միջոցներով, կարող ենք հասնել խոշոր աղէտների և սնանկութիւնների։

Մենք ասացինք, որ քայքայումը վնասակար կը լինի բոլորի համար, և ընդգծեցինք, որ քայքայման դէմ մաքառելու պէտք է ելնեն նոյնպէս բոլորը։ Մեր առաջ աշխատաւորի և աշխատանք տուողի, վարձվածի և կապիտալի հակադրութեան հարցեր չեն միայն, որ մենք Թողնենք նրանց պայքարելու միմեանց դէմ և այս ու այն միջին ճանապարհը որոշելու։ Խնդիրները շօշափում են աւելի բարդ դրութիւն։

Եւ մենք պարտականութիւն ունենք ըմբռնել ու ընդգրկել խնդիրը նրա բոլոր ընդարձակութեամբ, միջոցներ որոնելով որ մեր երկիրը և նրա ազգաբնակութիւնը կարողանան վերակազդուրել իրանց և ձեռք բերել ընդունակութիւն զարգացնելու այն կուլտուրական գործերը, որոնց համար դիւրութիւններ և յարմարութիւններ ունի մեր երկիրը։

IX

Եւ մեր աշխատաւոր դասը, որ սկսել է հանդէս գալ իբրև գիտակցական տարր, պէտք է ինքը իր կողմից փորձեր անէ կանգնելու երկրի շահերի պաշտպանութեան տեսակէտի վրա և Թոյլ չը տայ, որ տեղի ունենան այնպիսի անպատեհութիւններ, ինչպիսին օրինակ եղաւ անցեալ տարի Բաթումում, երբ փակվեցին գործարանները և հազարաւոր մշակներ մնացին առանց աշխատանքի և ապահովութեան։

Ամեն անգամ, երբ վէճ և անհամաձայնութիւն է ծագում բանւորի և գործարանատիրոջ մէջ, մարդկանց մի մասը առանց գործին տեղեկանալու բռնում է առաջինի կողմը, միւս մասը՝ երկրորդի կողմը։ Եւ սկսվում է պայքար, որի մէջ մի բան շատ պարզ նկատելի է, որ հակառակ կողմերը վստահութիւն չունեն դէպի միմեանց և չեն ուզում լսել մէջ բերված առարկութիւնները։

Դա սխալ քաղաքականութիւն է և ապարդիւն։

Աշխատանքի և կապիտալի վէճը պէտք է լուրջ հիմունքների և պատճառաբանութիւնների վրա լինի հաստատված և ոչ թէ քմահաճոյքների ու սպառնալիքների։

X

Մենք շատ լաւ գիտենք, Թէ կապիտալի ներկայացուցիչները ինչպիսի հնարագիտութիւններով կարողանում են շահագործել աշխատաւորին և երկար տարիների դէպքերը անվստահութեան զգացմունք են սնդել աշխատաւորի մէջ դէպի աշխատանք տուողը։ Եւ անկասկած բանւորական գիտակցութեան աճելը խլել է կապիտալի ներկայացուցիչներից նրա շահագործութիւնների մի մեծ տոկոսը։

Սակայն հէնց նոյն այդ գիտակցութիւնը պարունակում է իր մէջ պարտաւորութիւն, այն է՝ հաստատել արդար վերաբերմունք դէպի տնտեսական կեանքի երևոյթները և խորտակելով նախկին կապիտալիստական քմահաճոյքը դնել նրա տեղ տնտեսական գործօնների խելացի գնահատութիւն։

Երբ աշխատաւոր դասը կը կանգնէ այդ բարձրութեան վրա և նա ինքը կը լինի պահանջկոտ և բծախնդիր դէպի աշխատաւորների յայտարարութիւնները, կը մերժէ իւրայինների անարդար և չափազանցրած պահանջները, այն ժամանակ նա ձեռք կը բերէ վստահութիւն դէպի ինքը, և առանձին ոյժ կը ստանայ նրա ձայնը, երբ նա հանդէս կը գայ իր արդար պահանջներով։

XI

Երբ մեր ազգաբնակութեան բոլոր խաւերը կը համակվեն մի ընդհանուր գաղափարով մաքառելու այդ քայքայումների դէմ, այն ժամանակ յոյս կարելի է տածել, որ մենք կը հասնենք որևէ դրական հետևանքի։

Արդարև, գիւղացուն պէտք է տանք միջոցներ մշակելու իր արտերը, նորոգելու իր տները, կազդուրելու իր տնտեսութիւնը և բազմապատկելու իր աշխատանքը։ Արդիւնագործութեան մէջ գործօղները պէտք է նպաստեն միմեանց կանոնաւորելու աշխատաւորների և աշխատանք տուողների յարաբերութիւնները։ Կրեդիտային հիմնարկութիւնները պէտք է աջակցեն Թէ գիւղացուն և Թէ բանւորին, Թէ արհեստաւորին և Թէ աշխատանք տուողներին՝ պահպանելու եղած տնտեսութիւնը։ Եւ հասարակութիւնը իր ամբողջութեամբ պէտք է կարողանայ զոհ չը դառնալ ռէակցիայի զանազան դաւերին, որոնց շնորհիւ այնպիսի դժոխք ստեղծվեց մեր երկրում։

Չը պէտք է Թոյլ տանք, որ քայքայումը աւելի ևս առաջ գնայ, և նրա դէմ պէտք է ուժգին մաքառենք։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէհրան, 20 դեկտեմբերի

Ընկճելով իր անբուժելի հիւանդութիւնը, Շահը, բոլորական լիակատար գիտակցութեան մէջ, ստորագրել է մէջլիսի մշակած և մի քանի փոփոխութիւնների ենթարկած կանոնադրութիւնը։ Գլխաւոր լրացուցիչ կէտն է երկրորդ պալատի կամ սենատի հաստատելը։ Կանոնադրութիւնը ստորագրել է նաև գահաժառանգը։ Ծանր հիւանդ Շահի հայրենասիրական գործելակերպը խոր տպաւորութիւն է գործել։

(«Հեռ. Գործ.»)

Թէհրան, 20 դեկտեմբերի

Սահմանադրութեամբ նշանակված սենատը բաղկանալու 60 անդամներից, որոնց կէսը նշանակվում է Շահից, իսկ միւս կէսը ընտրվում է ազգաբնակութիւնից։ Պատգամաւորների պալատը կազմված է 162 անդամներից, որոնց ընտրում են 6 դասերը, որով պարսկական սահմանադրութիւնը նմանվում է բելգիականին։ Երկաթուղիներ կառուցանելու մենաշնորհներ կարելի է տալ միայն պատգամաւորների պալատի համաձայնութեամբ. նոյնպէս նրա համաձայնութեամբ է կնքվելու պետական փոխառութիւնները։

(«Վօլֆ»)

Ի հետևումն Կովկասի Փոխարքայի արած միջնորդութեան, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը առաջարկել է Վլադիկավկազի երկաթուղային վարչութեանը, ամենայն օր, այս դեկտեմբերի ընթացքում, հերթից դուրս Բագու ուղարկել 20-ական վագօն ցորեն՝ յիշեալ քաղաքի ազգաբնակութեան հացի կարիքին բաւարարութիւն տալու համար։

Հայ-Թուրքական ընդհարումներից վնասված և բնութեան աղքատութիւնից տառապող Անդրկովկասի գիւղերից մի քանիսի յարուցած միջնորդութիւնների առիթով, որով յիշեալ վնասված գիւղերը խնդրել էին հացը տեղափոխելու համար երկաթուղային սակագինը իջեցնել, ֆինանսների մինիստրը հեռագրով, դեկտեմբերի 14-ին, տեղեկացրել է Կովկասի Փոխաչքային, որ Կովկասի երկաթուղիներով ուղարկվող ալիւրի և ցորենի պակասեցրած սակագինը իւրաքանչիւր ռուբլուց՝ կը հրատարակվի և կը գործադրվի այս դեկտեմբեր ամսի 16-ից։

—

Ուշադրութեան առնելով Կովկասի Փոխարքայի յարուցած միջնորդութիւնը, Ներքին գործերի մինիստրութիւնը 19983 ռուբլի է յատկացրել՝ մատակարարական կարիքների համար, հայ-թուրքական ընդհարումներից և բնութեան տարերքից վնասված Գանձակի գաւառի 13 գիւղերին, երեք տարվայ ընթացքում վերադարձնելու պայմանով։ Իսկ սերմացուի և քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար յիշեալ գիւղերին կառավարական փոխատւութիւններ բաց թողնելու առիթով կովկասեան գլխաւոր իշխանութեան յարուցած միջնորդութիւնը լռութեան է դատապարտվել մինիստրութեան կողմից։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Դեկտեմբերի 11-ին Պետերբուրգում կայացել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան Մոսկվայի ռայօնական կոմիտեի գործադիր յանձնաժողովի նիստը։ Պետական Դումայի անդամութեան թեկնածուների պլեբիսցիտը վերջացել է։

Համարեա բոլոր բիւլլետենները լրացված են։ Նրանց վրա կողմնակի մակագրութիւններ չեն արվել։ Գործադիր յանձնաժողովը քննել է լիազօրների ցուցակները կազմելու հարցը։ Արդէն կուսակցութեան 30 անդամներից համաձայնութիւն է ստացվել (պահանջվում է 20 հոգի)։ Լիազօրների ցուցակը կը ներկայացվի քաղաքային կոմիտեի հայեցողութեանը և ապա միայն կենթարկվի պլեբիսցիտի։

Կուսակցութեան անդամներին պարբերաբար այցելութիւն կատարելը շարունակվում է և շատ լաւ հետևանքներ է տալիս, ընտրողների և կոմիտեների միջև կապ պահպանելու նկատմամբ։ Ներկայումս ագիտացիայի աշխատանքները թեթևացնելու նպատակով ռայօնները բաժանում են ենթառայօնների և աւելի փոքր շրջանակների, և միջոցներ են մշակվում խմբակների մէջ ընդհանուր կապ ու ներդաշնակութիւն պահպանելու համար։ Կուսակցութեան անդամներին այցելութիւններ կատարելիս տարածում են կուսակցութեան գրականութիւնը և առաջարկում են բոլոր անդամներին այդ գործում ջերմ մասնակցութիւն ցոյց տալ։ Կուսակցական գրականութեան պահանջը օր ըստ օրէ աճում է։ Կոմիտէի անդամներից մէկին յանձնարարված է բանակցութիւն սկսել մի քանի անկուսակցական կազմակերպութիւնների հետ նախընտրական համաձայնութիւնների համար։

—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրօնական կոմիտեն դիմել է տեղական բոլոր կոմիտեներին, յիշեցնելով որ ներկայ դեկտեմբերի 7 ի անուանական ուկազի հրատարակումից յետոյ սկսվում է նախընտրական շրջանը և որ ընտրողներից իւրաքանչիւրը, 1905 թւի դեկտեմբերի 11-ի օրէնքի XII յօդ. 1-ին կէտի հիման վրա, իրաւունք ունի ընտրողների ժողով հրաւիրել հավօնի կարգով, նոյն յօդուածի 5-րդ կէտի համաձայն, յայտնելով ժողովի տեղի և ժամանակի մասին տեղական ոստիկանութեանը ժողովից 24 ժամ առաջ և նրա հետ ներկայացնելով կարգադրիչների կամ գումարողների անուանական ցանկը։ Կենտրօնական կոմիտեն առաջարկում է ընտրողներին ընդարձակ կերպով օգտվել այդ իրաւունքից և սկսել նախընտրական ժողովներ գումարել նահանգական և գաւառական քաղաքներում։

ՄԱՄՈՒԼ

—

«Страна» լրագրում Մ. Մ. Կովալևսկին հետևեալ կերպով է բնորոշում Լ. Տոլստոյի «Ռուսաց յեղափոխութեան նշանակութեան մասին» բրօշիւրը.

Բրօշիւրի ամբողջ բովանդակութեան նպատակն է կարծես ցոյց տալ, որ անհրաժեշտ է ապրել առանց կառավարութեան։ «Գիտնական և խելօք մարդիկ,—գրում է Տոլստոյը (59-րդ երեսում),—սկսած Բակունինից և Պրուդոնից մինչև Ռեկլիւս, Մաքս Շտիրները և Կրօպոտկինը անհերքելի ճշտութեամբ ապացուցեցին իշխանութեան անխոհեմութիւնը և վնասակարութիւնը»։ Եթէ Լեվ Տոլստոյը նրանցից որևէ բանով տարբերվում է, այդ միայն նրանով, որ, ինչպէս նա վկայում է, նրանք չեն ուզում հասկանալ հետևեալ պարզ ճշմարտութիւնը. մարդկային օրէնքներից ազատվելը հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ ընդունելու լինենք բոլոր մարդկանց համար ընդհանրական աստուածային օրէնքը։

Այդ փոքրիկ քաղուածքն էլ բաւական է ցոյց տալու համար, որ յանձին «Ռուսաց յեղափոխութեան նշանակութեան մասին» բրօշիւրի հեղինակին մենք գործ ունենք կրօնական անարխիստի հետ։ Նրա հեռաւոր նախահայրերը այն «հինգերորդ միապետութեան» կամ Քրիստոսի երկրաւոր թագաւորութեան մարդիկն են, որոնք անգլիական առաջին յեղափոխութեան և Կրոմվելի պրոտեկտորատութեան շրջանում պահանջում էին վերացնել բոլոր իշխանութիւններն ու օրէնքները և պնդում էին, որ անգլիական սահմանադրութեան փոխարէն պէտք է տիրող լինեն տասն պատուիրանները, այսինքն այն օրէնքը, որ Աստուած տուել է Մովսէսին։ Տոլստոյի կարծիքով, որը արդէն վաղուց է նա յայտնել և այժմ էլ կրկնում է յիշեալ բրօշիւրի մէջ, ռուս քաղաքացիները պէտք է ջանք գործ դնեն պասսիվ դիմադրութեամբ հաստատելու այն նոր կարգերը, որոնք դեռ ևս անյայտ են աշխարհին։ Բայց եթէ Վիբորգի կոչը մինչ որևէ մի բան ապացուցել է, այդ այն է, որ ռուս ժողովուրդը մտադիր չէ այդ ճանապարհով գնալու։

*

Դեկտեմբերի 12-ից Ելցում սկսել է լոյս տեսնել ռուսերէն լեզուով մի շաբաթաթերթ «Елецкій Край» անունով, հասարակական յայտնի գործիչ Ա. Ստախովիչի խմբագրութեամբ։ Շաբաթաթերթի առաջին համարում առանձին ուշադրութիւն է գրաւում խմբագրական յօդուածը։ Նա սկսվում է համեմատութեամբ այն սարսափների, որ կրել է Ռուսաստանը Նիկոլայ I-ի ժամանակ և կրում է ներկայումս։ Լրագիրը գտնում է, որ այդ կողմից Ռուսաստանը այժմ աւելի վատթար դրութեան մէջ է գտնվում։

Եւ իսկապէս,—հարցնում է լրագիրը,—միթէ կարելի է համեմատել այն ժամանակվայ սարսափները ներկայի հետ։ Ռուս քաղաքացիների բաղդը ներկայումս տնօրինող Դուրնովօ և Ստոլիպինները, միթէ, հսկաներ չեն թւում նիկօլայեան ադյուտանտներ Բենկենդորֆի ու Դուբելտի համեմատութեամբ։ Սաստկացրած ու արտակարգ «պահպանութիւնները», զինուորական և պաշտօնական «դրութիւնները» տարածված էին, միթէ, այն ժամանակ, համարեա երկրի բոլոր անկիւնները։ Այն ժամանակվայ [illegible] քաղաքական պատժի հինգ [illegible],—կարելի է, միթէ, համեմատութեան դնել ժամանակակից գնդակահարութեան և կախաղանների ճարակի հետ։ Միթէ, այն ժամանակ կախաղանները զարդարում էին մեր քաղաքներն ու գիւղերը, ծաղկում էր այն ժամանակ գնդակահարութիւնը վճռականութեամբ։ Աւերում՝ գետնի հետ հաւասարեցնում էին այն ժամանակ գիւղերն ու աւանները թնդանօթային հրանօթներով։ Իրաւ որ մեծ պրօգրեսը իրագործեցինք մենք 50 տարվայ ընթացքում...

Ռուսաստանը ազատ կեանքի շաւղի վրա դնելու համար «Елецкій Край»-ը հրաւէր է կարդում համախմբվել ժողովրդական ազատութեան կուսակցութեան դրօշակի տակ։

*

Դեկտեմբերի 11 ի հրահանգը ընտրութիւնների առիթով ընդհանուր զայրոյթ է պատճառել։ Մայրաքաղաքի մամուլը մի շարք յօդուածներ է նուիրում այդ հարցին։

«Рус. Вѣд.» լրագիրը այդ առիթով նկատում է.

Ազատութիւն առնելով մինիստրները հասկանում են միայն հոկտեմբերեանների և սև-հարիւրեակային կազմակերպութիւնների հովանաւորելը, որը վերջ ի վերջոյ դառնում է մի տեսակ testimonium paupertatis։ Նշանակում է մինիստրութեան գործն էլ է շատ վատ, եթէ դաշնակիցներին էլ, եթէ մի կողմ է նետում արդէն սահմանափակող ձեռնարկութիւնները և սկսում է զբաղվել ընտրողների նախապատրաստութեամբ ազատ կերպով, առանց քօղարկվելու անվտանգութեան դատողութիւններով։ Մեզանում վախենում են կուսակցական պարլամենտական մինիստրութիւնից, բայց միթէ որևէ պարլամենտական մինիստրութիւն իրան թոյլ կը տայ առանց քաշվելու այնպիսի ճնշում գործ դնել ընտրողների վրա, յօգուտ մի ուրիշ կուսակցութեան, ինչպէս որ այդ անում է իբր թէ սահմանադրական Ստոլիպինի մինիստրութիւնը։

*

«Հոսանք» լրագիրը, իր վերջին համարում խօսելով թուրք մասսայի զարթնումի մասին, բուրժուական և սխալ կարծիք է անուանում այն տարածված հասկացողութիւնը՝ թէ իսլամական ֆանատիզմով սնված մահմեդականութիւնը գրականապէս անընդունակ է եւրոպական քաղաքակրթութեան։

Որովհետև կեանքը

ամբողջ մահմեդական հասարակութիւնը մղեց կապիտալիստական աշխարհի շարքերը՝ նրա բոլոր անհրաժեշտ տարրերով և ուղեկցներով։

Լրագիրը «Նահապետական ինքնուրոյն» հիմքերի քայքայման հետևանք համարելով այն հանգամանքը, որ թուրք մասսաները զարթնում են և սկսում գիտակցել իրանց դասակարգային շահերը, ներկայացնում է իբրև ապացոյց այն հանգամանքը, որ նրանք աւելի են մտնում սօցիալ-դեմոկրատական շարքերը, որ թուրքական սօցիալ-դեմոկրատիան արդէն սկսել է հրատարակել իր օրգանը («Թէքամմիւլ»—Կատարելագործում)։ Եւ նկատելով, որ նրանք «աւելի են մօտենում իրանց օտարազգի ընկերներին», ասում է.

Եւ նշանակալից է այն, որ այդ ամենը տեղի է ունենում այն ժամանակ, երբ թուրք բէկերն ու հայ բուրժուազիան իրանց քաղաքական կուսակցութիւններով միասին կանգնած են դէմ առ դէմ, որպէս երդուեալ թշնամիներ։ Թուրք պրօլետարիատը, նոյն այդ մօմենտում, նրանց գլխի վրայով իր եղբայրական ձեռքն է մեկնում հայկական պրօլետարիատին։

Այդքան մեծ է պրօլետարիատի բարոյական ոյժը. այդ է նրա պատմական միսսիան։

Պատմական ճակատագրի կամքով նա կոչված է ամբողջ մարդկութեանը տալու սիրոյ և եղբայրութեան լօզունգը, նա իր դասակարգային կռւով իրականացնելու է այդ վեհ ու սրբազան ձգտումները և այնտեղ, ուր բուրժուազիան ձգտում է թշնամութիւն ու կռիւ առաջ բերել, պրօլետարիատը հանդիսանում է եղբայրական սիրոյ և անձնազոհութեան դրօշակիրը։

Եւ այն, ինչ որ անկարող եղան ձեռք բերել դարերի ընթացքում շատ իմաստուն ռէֆօրմատորներ, այժմ մեր աչքի առաջ ստեղծագործում է բանւոր դասակարգը իր ձեռքով։

Արևելքը զարթնում է։

Նա առնչութիւն է հաստատում ընդհանուր կապիտալիստական աշխարհի հետ և խզում է իր կապը անցեալի հետ։

Ապա յիշատակելով այդ երևոյթը՝ «Հոսանքը» վերջացնում է իր յօդուածը հետևեալ խօսքերով.

Միջազգային պրօլետարիատը եղբայրական ջերմ ողջոյնով դիմաւորում է թուրք մասսաների մուտքը իր շարքերում և յանձին նրանց նա կարող է ասել ամբողջ բուրժուական աշխարհին. «Մենք յաղթանակում ենք»!!

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆԻՑ

—

Դեկտեմբերի 18-ին

Ոչ ոք չէ կարող ուրանալ, որ ինչպէս հայերի, նոյնպէս թուրքերի և այլ չէզոք ազգերի մէջ կան մարդիկ, որոնց համար բոլորովին ձեռնտու չէ խաղաղութիւնը։

Օրինակ, ոստիկանութեան մի պաշտօնեայ մի հայի ասում է. «Ինչի՞ համար հայերը 1000 մարդ են բերել հայոց մասը. թուրքերը լսելով այդ լուրը՝ իրանք էլ 2000 մարդ են պատրաստել»։

Քանի որ ոչ հայոց մասում են 1000 մարդ պատրաստել և ոչ թուրքաց մասում, կարելի է ասել, որ այդ հին թուրք պաշտօնեան պրօվօկատոր է։

Թուրքերը վերանորոգելով հայերի հետ իրանց նախկին յարաբերութիւնները, միաժամանակ նրանցից մի քանիսը պրօվօկատօրական հնարքներ է ցոյց տալիս։

Օրինակ, մի հայի այգում հայերը գտնում են մի կով և յանձնում են ոստիկանութեան։ Վերջինիս արձանագրութեան համաձայն, թուրքի վրա ծանրանում է կովի տուած վնասը։ Թուրքը, չը կամենալով վճարել այդ վնասի արժէքը, իշխանութեանը գանգատվում է հայերին մեղադրելով մէկ կովի փոխարէն մի քանի կով տանելու մէջ։

Բարեբաղդաբար հայը պատկանում է այնպիսի մարդկանց թւին, որոնց անկեղծութեան վրա իշխանութեան ներկայացուցիչները չեն կասկածում և այդպիսով թուրքի խնդիրքը չէ յարգվում։

Նորերումս թուրքական կրօնը ընդունած մի հայի մատնութեամբ խուզարկութեան ենթարկվեց քաղաքիս ծայրում գտնվող Բաղդասարեանի և հարևան տները։ Ինչպէս հետագիրը իր ժամանակին յայտնեց, Բաղդասարեանի տների ներքևի յարկում գտնվել են մի քանի ռումբեր։ Իշխանութիւնը ձերբակալեց վերևի յարկում ապրող 5 հոգու և բանտարկեց ու յանձնեց զինուորական դատարանին։ Ոստիկանութեան պահանջով այդ թաղի բնակիչներին 3000 ր. տուգանքի պիտի ենթարկէին։

Գնդապետ Սաֆոնովը, անձամբ ստուգելով, աւելորդ համարեց տուգանքի առնել 100 քայլի վրա գտնվող շրջակայ ոչ մի յանցանք չունեցող հարևաններից, և, ինչպէս լսեցինք տուգանքը վերացրին։

Այժմ, ինչպէս լսեցինք, Բաղդասարեանի տան կէս խանութպանը և տնատէրերը մօտ 150 ռուբլի տուգանքի են ենթարկված...

Անցեալ շաբաթ մի թուրք 20 հատ ոչխար է բերում ծախելու հայոց մասում։ Բարեբաղդաբար ծախվում է շուկայի ռուս վերակացուի ներկայութեամբ և նրա տուած տոմսակով, ծախելուց յետոյ թուրքը յայտնում է իշխանութեանը, որ չորս ոչխարը հայերը գողացել են, բայց շնորհիւ վերակացուի տուած արդար ցուցմունքի և փաստաթղթին թուրքի գանգատը թողնվում է անհետևանք։ Եւ միայն անհետևանք, ոչ մի դէպքում զրպարտութեան, պրօվօկատորութեան համար պատիժ ի խրատ և զգուշութիւն միւսների...

Մի այլ թուրք 40 ոչխար է բերում, հայոց թաղի մսավաճառների վրա ծախում և, ինչպէս ասում են, սովորականից էժան գնով. երկու օրից յետոյ թուրքերը գանգատվում են իշխանութեան, որ ոչխարները գողացված են եղել և պատկանում են ուրիշին, միաժամանակ յայտնելով ոչխար ծախող թուրքի հայոց մասում անհետանալու մասին։

Այս մասին հայերի վրա 500 ր. տուգանք են դրել. ոչխարի արժէքը 500 ռուբլի է։

Մի թուրք գանգատվում է Կարապետ Եղիեանցի վրա, որ այգուց ցախ է գողացել։ Իշխանութիւնը արձանագրութիւն է կազմում։ Եղիեանցը 2 շաբաթ բերդ է նստում։ Այժմ էլ 170 ռուբլի տուգանքի է ենթարկվել, որը խստիւ պահանջում են։

Շաբաթ օրը խիստ խուզարկութիւն կատարվեց Կորինաշէնում, որը մի փուշ է դառել թուրքերի համար։ Բայց այս անգամ խուզարկութիւնը ոչ զէնք գտնելու մտքով, այլ գտնելու այն չորս հայերին, որոնք օր ցերեկով կողոպտեցին Կորինաշէնից ոչ այնքան հեռու գտնվող վայրում երկու թուրք շինականի, առնելով նրանց գօտին և 30 ռուբլին։ Ցոյց տրված հայերի վրա ոչ մէկին մատնացոյց չարաւ զրկվածը։

Ոստիկանապետը խորհուրդ տուեց հայերին անպայման իշխանութեան յանձնել յանցաւորներին, հակառակ դէպքում սպառնում է մեծ տուգանք։

Այդ երեկոյեան ոստիկանապետը և հայոց մասի „պրիստաւը, մտնելով կլուբը, հայ ինտելիգենցիայի ուշադրութիւնը հրաւիրեցին այդ չարիքի վրա, միաժամանակ խորհուրդ տալով որ հայերը յանձնեն իշխանութեանը չարագործներին, հակառակ դէպքում տուգանքները տուգանքների վրա կը թափվեն կարկուտի նման։

Ասում են՝ 3000 ռուբլի տուգանք է սպառնում հայերին։ Իշխանութեանն են յանձնում կասկածաւորներին։ Թուրքերը ասում են, որ դրանք չեն իրանց կողոպտողները...

Չար լեզուներն ասում են, որ թուրքերի մատնացոյց չանելը նրա համար է, որ 3,000 ռուբլու տուգանք դնելու շշուկը կայ մէջտեղը...

Ասում են... վա՜յ ասողի հոգուն։

Ա. Ս.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ռուշանաշէն (Գեօկչայի գաւ.), 14 դեկտ. —Գեօկչայի գաւառի Իվանովակի ոստիկանական մասում, ուր գտնվում են բոլոր հայաբնակ գիւղօրայքը, վերջերումս սաստիկ և շուտ-շուտ գողութիւններ են կատարվում, որի պատճառով ժողովուրդը սաստիկ տուժում է։

Մի կողմ թողնելով մանր գողութիւնները, արձանագրեմ աւելի մեծ գողութիւնները, որոնք տեղի են ունեցել վերջին ամսում, այսինքն այն ժամանակից յետոյ, երբ տնային կենդանիները ցրտերի պատճառով գոմերում են տեղաւորվել։ Մինչ այդ ապրանքը գողացվում էր բացօթեայ դաշտերից, արօտատեղերից, իսկ այժմ ուրիշ տեսակ է գողութիւնը։ Գողերը անհնար նեղութիւն են կրում մինչև կարողանում են ապրանքը փախցնել։ Նրանք կտրում են գոմի դուռը կամ սղոցում են փայտեայ քլանը, հանում են չալլանդի պինդ կացնով խփած սիւները կամ թէ փորելով քանդելով գոմի կողքից կամ աւելից՝ քշում են գոմերի բոլոր գլուխ ապրանքը, թողնելով տէրերին լաց ու կոծի մէջ, առանց լծկանի ու կովի։

Անցեալ ամսում գողացվեց ազայիշինացի Համբարձում Պետրոսեանցի գոմից 9—10 գլուխ ապրանք, և վճարվելով այդ ապրանքների համար 100 ր. փրկանք ապրանքը յետ առնվեց։

Նոյեմբերի վերջերում գողացվեց փոքր գանձակեցի աղքատ Հայրապետ Մելքումեանցի մի ջուխտ գոմէշը, և փրկանք ստանալով 70 ր.՝ ապրանքը յետ գնվեց։ Մելքումեանցը իր մեծ ընտանիքը այդ մի ջուխտ գոմէշով էր կերակրում, էլ չունի։

Միաժամանակ գողացվեց ռուշանաշէնցի Սարգիս Սերգէյեանցի ջաղացից նրա 2 ձին և այդպէս կորաւ։

Ամսիս սկզբում ուշտալեցի Վարդան Արզումանեանեանցի գոմից գողացվեց նրա մի ջուխտ գոմէշը և կորած է դեռ։

Ամսիս 12-ին գողացվեց փոքր գանձակեցի Աւանէս Պօղոսեանցի 1 ջուխտ գոմէշը։ Նա պիտի որդուն պսակէր առաջիկայ երկուշաբթի, բայց նրա ուրախութիւնը սուգի փոխվեց։

Ամսիս 14-ի գիշերը գողերը կտրելով ռուշանաշէնցի Սարգիս Սերգէյեանցի գոմի դուռը՝ տարան նրա 5 գլուխ կովը և 1 ձին։

Ժողովուրդը քամվում է. պէտք է մի կերպ այդ ընդհանուր անապահովութեան առաջն առնել։

Գ. Բ. Ստեփանեան

Գիրք գիւղ (Գեօկչայի գաւառ), դեկտեմբերի 10-ին.—Գիրք գիւղը բաղկացած է 250 տնից։ Ժողովուրդը գլխաւորապէս պարապում է երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Ներկայ տնտեսական աննպաստ պայմանները Գիրքից քշել են 85 ընտանիք և նոյնքան էլ աշխատաւոր ձեռքեր (մնացած ամեն տնից) դէպի Բագու և այլ քաղաքներ։ Գիրքը դատարկվել է, մնացել են ծերերն ու մանուկները, բայց և այնպէս մնացածներն էլ հացի նեղութիւն ունեն։ Չի անցնի երկու ամիս, և Գիրք գիւղում հացի սով կը լինի, եթէ դրսից օգնութիւն չը լինի։

Վերյիշեալ հանգամանքը ի նկատի ունենալով, հասարակութիւնը, ժողով գումարելով, լիազօրութիւն տուեց չորս անձանց դիմել բագուաբնակ գիրքեցի կարողաւոր անձանց, որ նրանք, ինչ պայմաններով էլ լինի, հաց մատակարարեն գիւղին։ Նամանաւանդ որ պ. Բարհնեանը ինքնաբերաբար խոստացել է մի վագօն ալիւր ուղարկել գիւղիս չքաւոր և անկարող անձանց, որոնց թիւը շատ-շատ է։

Այսօր լիազօրներից երկուսը ճանապարհվել են Բագու. յուսով ենք, որ նրանց գնալը անօգուտ չի անցնի։

Ի դէպ է յիշել այստեղ և այն, որ եղբ. Բարհնեանների սրտին շատ են մօտ եղել գիւղի կարիքները։ Նրանց հաշւում են շինվել գիւղի փառաւոր եկեղեցին և ուսումնարանը։ Այժմ էլ վճռել է պ. Բարհնեանի որդի երիտասարդ Ալէքսանդրը գիւղում ելեքտրական ալիւրաղաց կառուցանել, որի մասին գիւղացիների հաւանութիւնը ստացել է։ Մեզ յայտնի է նոյնպէս, որ յիշեալ Ալէքսանդր Բարհնեանը մտադիր է գիւղատնտեսական զանազան ձեռնարկութիւններ սկսել, բերել տալով զանազան մեքենաներ։ Գիրքեցիք շատ ուրախ են, որ իրանց միջից դուրս են եկել ու գտնվում են այնպիսի կարողաւոր մարդիկ, որ, իրանց անձնական շահը մի կողմը թողնելով, աշխատում են հասարակութեան օգտին։

Մեզ մնում է ուրախանալ ու սպասել, որ պարոնի ձեռնարկութիւնները օր առաջ կատարվեն, որը այնուհետև կարող է գիւղացուն կապել իր հայրենի հողի և ջրի հետ, և թէ մեր շինականները ստիպված չեն լինի Բալախանու մռայլ մթնոլորտում իրանց բաղդը որոնել։

Ա. Բ. Աբրահամեան

—

Ախալցխա, 11 դեկտեմբերի

Դառնանք էլի մեր դպրոցներին, որի մասին գրելու շատ բան կայ, և որի վրա ամեն բանից աւելի պէտք է կենտրօնացած լինի մեր ուշադրութիւնը։

Վերջապէս փողը ստացվեց, ստացվեցին և դասագրքերը, վերջինները ուղիղ 11 օրվայ ընթացքում. այն ինչ ամենաշատը 3 օրում պէտք է լինէր. այդ օրերից 5—6-ը գողացան ուղարկողները, մի քանիսն էլ պօստի արագաշարժութեանն ու կանոնաւորութեանը զոհ եղաւ. այժմ մի քանի օր էլ հարկաւոր է կազմել տալու համար, և ահա մօտենում է նոր տարվայ արձակուրդը, ու տարին կիսվեց, իսկ մենք դեռ բան չենք շինել։ Այս բոլոր անկանոնութիւնների դիմաց ուսուցչական խմբի մի քանի անդամները (մի քանիսը չէ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՌԱՅԼ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1

Փանոսի վրէժը

Բ

Անցաւ մի թէ երկու ամիս։ Վրա տուեցին թուրք-հայկական ընդհարումները։ Ստեղծվեց մի խառն ու փոթոր դրութիւն, որի մէջ մոռացվեց ամեն բան։ Գիւղը շարունակ զինուորական լիազօրներ էին գալիս, զէնքի և պատրաստութիւնների կարգադրութիւններ անում, որոշում էին դիրքերը և այլն։ Փանոսը այժմ քան երբևիցէ պէտքական մարդ էր դառել, և եթէ մի բան գլուխ էր գալիս՝ անպայման նրա օգնութեամբ և մասնակցութեամբ։ Գիւղացիք, մոռացած նրա հետ ունեցած հաշիւները և նրա վրա տուած գանգատները, միաբանվել, միացել էին՝ գալիք վտանգի դէմն առնելու համար։ Սակայն Փանոսը չէր մոռացել այն սոսկալի նախատինքը, որ կերաւ քննութեան օրը, երբ Վարդանի տեղած մերկացումների տարափի տակ պապանձվել, արձան էր կտրել։ Այն երեկոյ, երբ քննիչը հեռացաւ, Փանոսը կատաղութիւնից իր միսն էր ուտում։ Նա պարզօրէն հաշիւ էր տալիս, որ Վարդանը ցեխի մէջ խցեց իրան, գետնովը տուեց։

—Մորթեց, անզգամը մորթեց անաստուածը,—մրթմրթում էր նա և նստած տեղը անհանգիստ շարժվում։ Կսկիծը մեծ էր, թունդ. պէտք էր մի բանով շիջել այն։ Այդ երեկոյ և յաջորդ երկուսը նա խմում էր, երկար էր խմում, բայց քինախնդրութեան զգացմունքը դադար չէր տալիս նրան։ Նա որոնում էր մի միջոց, որով կարելի կը լինի իսկոյն ևեթ վրէժ լուծել Վարդանից, բայց չէր գտնում։ Սակայն դրանով չար զգացմունքը տեղի չէր տալիս, այլ աւելի ուժգնանում, և նա, իբրև մի փորձված մարդ, գիտէր, որ եթէ այսօր չէ՝ վաղը, մի շաբթից, ամսից, տարուց յետոյ կը գայ մի օր, երբ ինքը իր վրէժը կառնի, իր հոգին կը հովացնի։

Վերջապէս, եկաւ այդ օրը։

Գաւառից կարգադրութիւն էր եղել գիւղացիներին զինելու մասին, առանց կանգ առնելու միջոցների ու հնարաւորութեան դէմ։ Գիւղական բոլոր տները ցուցակագրվում էին և դասաւորվում ըստ կարողութեան։ Զունեւորները ազատվում էին, քիչ ունեւորների երկու կամ երեք ընտանիք միացվում էր մի հրացան գնելու, իսկ հարուստները—ամեն մէկը մի-մի հատ պէտք է գնէին։ Անկասկածում էր, որ գիւղացիք մեծ մասամբ ինքնայօժար կերպով չեն կատարելու այդ հրամանը, ոմանք անփութութիւնից և դանդաղկոտութիւնից, ոմանք առձեռն փող չունենալուց, ոմանք էլ՝ հէնց նրա համար, որ ինքնապաշտպանութեան առաջին շրջանում գիւղը արդէն վճարել էր եկող խումբը զինելու և կերակրելու համար և ազատ էր համարում իրան որևէ պարտականութիւնից, երբ կազմ և պատրաստ զինված մարդկանց սեպուհ պարտքն էր՝ յարձակման ժամանակ պաշտպան կանգնել գիւղին։

Յայտնելով այդ նոր կարգադրութիւնը, Փանոսը կարդաց իր կազմած ցուցակը, որի մէջ Վարդանի հայրը, որպէս տան մեծ, գրված էր հարուստների շարքը, և պատուէրից, որ երկու շաբաթվայ ընթացքում փողը պատրաստ ունենան, հակառակ դէպքում ինքը ստիպված կը լինի վաճառել սրա կամ նրա իրեղէնները կամ անասունը։

—

—Հա,—ասաց Վարդանի հայրը հետևեալ առաւօտ, նախաճաշի ժամանակ,—տեսա՞ր «գործակալը» մեզ էլ հարուստների հետ է գրել. քեզ էի ասում, Վարդան, լեզուդ քեզ քաշիր. ինչ է, գիւղի ամբողջ դարդ ու ցաւը քե՞զ էին տուել։ Արի ու հիմա հարիւր քսան ը. փող բեր՝ հրացան առ. ինչ անեմ, պատիժ կախեմ... Աստուած վկայ, լեզուններս ձեռիցս գնացին։ Յետոյ, դարանը բացվեց, այդ հրացանով արտ կը հերկես, չէ... չէ՞ս հերկի... Ախր քեզ ո՞վ բանի վրա հանեց այդ չնից շան ծնունդի վրա գանգատաւոր եղար։

—Ես մենակ էի... բոլորն էլ գանգատաւոր էին եկել... ինձ ընտրեցին՝ ես էլ խօսացի...

—Էլի, հա. գիւղը կործանվել էր, մարդ չը կար.. Ջանըմ, ինչո՞ւ չես թողնում մարդ իր ցաւով տապակվի։

Որդին երեսը շուռ տուեց։

—Ա՜խ, Վարդան, երբ դու կը սպիտակես, խելքի կը գաս... գիշեր ցերեկ ասում, խրատում եմ։ Տօ, ախր քեզ ինչ, որ Զոլոյի աղջկան իշի վրա ման են տուել կամ մէկ ուրիշին ծեծել-սպանել.. քո թանին խոմ թթու չէին տալ, այ որդի, քեզ խոմ մի միս չէին տուել։ Հիմի կասկած շան նման գիւղամէջ է ընկել, խօսք ու խաբարը հա լսում ենք, որ քեզնից վրէժ ունի առնելու ու չի թողնի, որ դու քո արածը մարսես։ Շատ զօռ է դրա համար, թէ մի օյին էլ քո գլուխն եկաւ... պրծանք. կնոջդ, երեխիդ խնայիր սկի չէ...

—Ասում ես, հայր. հեշտ է ասելը։ Արի ու մի խօսիր, երբ տեսնում ես այդ գազանի արարքները, երբ սիրտդ արիւնով լցվում է...

—Խօսիր, ինչ դուրս եկաւ, բանի տեղ դրի՞ն. նա իր տեղը պինդ մնաց, իրաւունքները էլ դեռ շատացան։

Վարդանը, զայրացած, առանց պատասխանելու հօրը, թողեց սեղանը և դուրս գնաց տանից։

—

Բարեկենդանի օրերին լրացաւ Փանոսի տուած ժամանակամիջոցը։ Վարդանանց տանը հետևեալ օրն էր։ Չաւուշ Ասլանը անէց-տուն ընկած՝ գիւղի մէջտանն էր կանչում նրանց, որոնք դեռ զէնքի փող չէին պատրաստել։ Դրանց թւում, ի հարկէ, և Վարդանի հօրը, ծերունի Հայրապետին։ Քաղաքից եկել էին երկու երեք հոգի, յայտնի չարչի-վաշխառուներ։ Որսի հոտն էր նրանց բերել՝ գնելու էժան գնով գիւղացու ստացուածքը։ Նրանց սիրտը իւղոտել էր հէնց այն օրից, երբ իմացել էին, որ նեղ լծված գիւղացիք, ձմռան այս դաժան օրերին, իրանց հանդի միակ բերքը ծախած, առանց կոպէկի նստել էին, սպասելով նորից աշնան, երբ նորից փող կունենան։

Երևաց Փանոսը։

Նա սկսեց կարդալ, իսկ չաւուշները բարձր ձայնով կանչել։ Առուգվեց բոլոր յապաղողների գալը։ Փանոսը դիմեց նրանց.

—Ախպէր, էսէնց բան չի լինի. դուք իշխա-գլուխ, հայվան չէք. եղած հրամանը չէ՞ք հասկանում։ Հանաք մասխարութիւն չեմ արել ձեզ հետ, հա՜, անաստուածներ. ինչ էք ձեռքներդ ծալել... էգուց թուրքերը չորս կողմից վրա կը տան, աչքներիդ լոյսը կը հանեն, գիւղը կը կրակեն, կանայքին, կին ու աղջիկ կը տանեն, հարամզադէք։ Հայիվա՞ր եմ խօսում ձեզ հետ, թէ... Ինչ է, լեզու չը հասկացաք... Դէհ, ջա՜լդ, ով ինչ ունի՝ գրով-ցակով ծախել կը տամ։ Առաջինը—Սուքիաս Մօսէսով։

Նա առաջ ընկաւ դէպի Մօսէսովի տունը։ Նրան հետևեցին միւսները։ Այդտեղ դուրս բերին մի քեչա (թաղիք), երկու հնամաշ փալաս, պղնձեղէն, մի երինջ, երեք մաքի, մի սայլ խոտ, մի ջուալ ալիւր։ Այս բոլորը հազիւ հազ լրացրեց քառասուն ռուբլին, որը պահանջվում էր Մօսէսովից։ Նկարագրել, թէ ինչ տեսարան էր ներկայացնում աճուրդի րօպէն, ինչ աղմուկ, սրտաճմլիկ դէմքեր, լաց ու կոծ—աւելորդ է։ Մի բան միայն բոլորի համար պարզ էր, որ չը թոյլ տալ, արգելել աճուրդը—անկարելի է, անհնար։ Ո՞վ կը յանդգնէր։ Հզօր հրամանն էր կատարվում։ Այստեղից անցան Սուքիասի մօտ, յետոյ Կիրակոսի, Սաղաթելի, Մարկոսի։ Ամեն տեղ նոյնը կատարվեց, շատ կամ քիչ տարբերութեամբ։ Վերջապէս, հերթը հասաւ և Հայրապետին։

—Գիւղականներ,—դիմեց Հայրապետը ամբոխին,—աղա կոմիտէն մեր վրա մի հրացան է դրել. ձեզ եմ ասում, իմ կարողութիւնը ձեզ յայտնի է. ինչ ունեմ ես. եկէք, տուն մտէք. թէ Մօսէսովից աւելի կայք ունեմ՝ թող որ մի հրացան մենակ առնեմ։ Փանոս աղա, աղը մերն է, մենք աղքինը. մեզ էլ խղճացէք, աղքատ մարդ ենք. թէ տաւար ունեմ՝ պարտքով է, եկեղեցին վկայ։ Ոչ մենք ուժից ընկանք, չէ՞ էլի հայութիւնն է փրկվում։ Սոված տկլոր լինեմ—շատ էլ դարդ կանեմ, որ թուրքը վրա կը տայ։ Նրա աչքը լուս, որ մենք այստեղ քաղցած կը կոտորվենք... Քառասուն չէնիր, քո ոտը պաչեմ, Փանոս աղա, քառասուն, որ հազար կտոր դառնամ—աւելին չեմ կարող տալ..

—Շատ մի խօսիր, ժամանակը չէ. աղէ՛րք, դուրս հանէք տանից ինչ որ կը տեսնէք ծախու. թալէն մտէք...

—Փանոս աղա, աղաչում եմ...—Ծերունին թաւալվեց Փանոսի ոտքերի տակ։

—Փանոս աղա, խնայի՛ր, ի սէր Աստծու, խնայի՛ր. կաշիս էլ որ պլոկես—չեմ կարող տալ... Զունեմ. դռնէ դուռ կընկնեմ, հաց կը մուրամ... Փանոս աղա, կէսը առ, քո որդու սիրուն, քո ոտը պաչեմ, խնայի՛ր։

Թալէից դուրս հանած ջուխտակ եզը խուլուլ խուլուլ էին լինում՝ հանդիպելով ցերեկվայ լոյսին և ձեան ցրտին։ Կովը բառաչում էր. նորածին հորթը դուրս չէին բերել՝ չմրսացնելու համար։ Շէմքի վրա թափթփել էին փալաս փուլուսը։ Ծերունին թաւալգլոր էր գալիս Փանոսի ոտքերի տակ։ Քաղաքից եկած վաշխառուները տնտղում էին ապրանքը։ Երեխեքը վնգվնգում էին. կանայք ծեծում փետում էին իրանց գլուխը։ Աղմուկը դժոխային էր։

Հէնց այդ վայրկեանին մէջ ընկաւ Վարդանը, որը հէ ի հէ գալիս էր ճանապարհից։ Նա քաղաք էր գնացել փող ճարելու համար։ Չորս հատ կարմիր տասանոց ձեռքին՝ նա մօտեցաւ Փանոսին։ Սա չարամտօրէն ժպտաց և ձևացրեց, որ իբր թէ չի տեսնում նրան.

—Ա՛ռ, ա՛ռ փողը։ Ինչո՞ւ ես խղճից դուրս բան բռնում. երեք մասից մէկը կարող եմ տալ, տալիս եմ. Ա՛ռ. լծկանս ծախում ես, լու՞ս ես անում. գարնանը ինչ անեմ։ Ես ո՞վ եմ, ինչ գլխի տէր եմ, որ մեն մենակ մի հրացան առնեմ։

—Դու հազար գլխանի ես, բրթեց Փանոսը և շարունակեց աճուրդը։

—Ասում եմ, տա՛ւ աւելին՝ իրաւունք չունես, երբ փողը տալիս եմ։

Փանոսը չը լսելու էր դնում իրան։ Նա պտոյտ էր գալիս, մի տեղից միւսն էր անցնում, իսկ Վարդանը շարունակ ուղեկցում էր նրան և փողը առաջ բռնում։

—Ռադ եղի՛ր գլխեցս, շատ ես դանկա տանում,—հանգիստ ձայնով արտասանեց Փանոսը։

—Հա՜, այդպէ՞ս,—կատաղեց Վարդանը, և փողը շպրտ ծոցը խրեց։ Նրա աչքերը առկայծում էին, շրթները դողդողում։ Հա՛, Փանոս աղա՛, ծախո՛ւմ ես, հա՛, ծախի՛ր, դէհ, ծախի՛ր...

Եւ նա անցաւ աճուրդի հանված իրեղէնների կողմը։

—Մարդ մօտ չը գայ. դէհ, քաշվի՛ր, Փանոս, թէ չէ ատամներդ կը քաղեմ, ճակատդ կը շարեմ...

—Դո՞ւ լակոտ...

—Լակո՞տ... առ քեզ լակոտ...

Մի ակնթարթում Վարդանը ծալեց, տակը դրեց Փանոսին և ձեռքը ուժեղ սեղմելով կոկորդին՝ խեղդոտում էր նրան... Իրարանցումը աննկարագրելի էր։ Չաւուշները վրա պրծան, դէն քաշեցին Վարդանին, ձեռ ու ոտը կապեցին և թողին կանգնած։ Փանոսը, կապտած երեսով, վեր կացաւ, կանգնեց, գլորվեց, յետոյ ուշքի գալով՝ կազդուրվեց բոլորովին ու մօտեցաւ Վարդանին, ձեռքը բարձրացրեց ապտակ հասցնելու երեսին, բայց կարծես թէ փոշմանեց, յետ եկաւ և ասաց.

—Տարէ՛ք։

—

Բանտը, որը միևնոյն ժամանակ և ժողովատեղի էր, կամ ինչպէս ասում էին «կանտօր», —կարծես մեռելանոց լինէր, որ կայ եկեղեցու խցերին կից։ Այդտեղ արձակեցին Վարդանի կապանքները և դուռը վրան կողպելով հեռացան։

—Է՛, թէ ըօղքի տուեց, ամօթից գետին կը մտնեմ...

Սպանե՞լ. չի սպանի։ Սա վրէժ է. պէտք է կենդանի թողնի, որ տանջվեմ շարունակ, խայտառակված, անպատուած...

Նա սարսուռ զգաց և ամաչեց, որ արտասուքի կաթիլներ երևացին նրա միրուքի թելերի վրա։

Նա թիկն տուեց պատին և մեծ ջանք էր թափում՝ հանգիստ երևալ։ Դրան բանալու ծակից նա տեսել էր դալար ճիպոտների խուրձը։ Փանոսը հրաման էր տուել գիւղականներին՝ հաւաքվել կանտօրի բակը, ուր, ի խրատ միւսներին, պէտք է դատվէր և պատժվէր Վարդանը։ Առանց դատի՝ որոշումն արդէն յայտնի էր. բայց դատը պէտք է լինէր։ Անպայման. Փանոսը հասկանում էր այդ։

Հազիւ մի երկու ժամ անցել էր, երբ կայացաւ դատաւորների նիստը։ Վարդանին դուրս բերին և կանգնեցրին նրանց առաջ։ Դրսում խռնված ամբոխը սուս-փուս նրան ճանապարհ տուեց։ Նա հետևում էր չաւուշներին, լուռ, ինքն իրան մոռացածի պէս։

Ի՞նչպէս անցաւ դատը Վարդանը չիմացաւ։ Նրան մի երկու հարց տուին, որոնց նա պատասխանեց «այո» թէ «չէ», ու վճիռը կայացաւ. նրան պէտք է մերկացնէին և հարիւր հարուած տային։

Այստեղ միայն Վարդանը ուշքի եկաւ իրան պաշարող մռայլ խորհրդածութիւններից։ Նա ուժգնապէս աղաղակեց.

—Մորթէ՛ք ինձ, անիրաւնե՛ր, խփէ՛ք, սպանէ՛ք... Ես շորերս չեմ հանի, չէ...

—Հա՛, հիմի՞. հասկանո՞ւմ ես մեր զօրութիւնը։

—Գիւղականներ,—սկսեց Վարդանը, բայց նրա ձայնը խեղդվեց։ Գիւղականները այն չէին, ինչ այն օր, երբ Փանոսի վրա գանգատ էին դուրս եկել։ Ամբոխը զգում էր իր անզօրութիւնը, որովհետև արդարութիւն որոնելու փորձը անաջող էր անցել։ Լսվում էին շշուկներ, բայց անհամարձակ։ Ո՞վ կարող էր երաշխաւորել, որ բողոքողին իր հերթին Վարդանի, և գուցէ վատթար օրին չէին գցի։ Մի բան, որ մարդ ամեն օր իր աչքով տեսնում է, որը կոչվում է կամայականութիւն, անկասկած մեծ դեր ունի ստրկացման գործում. իսկ ստրուկ ծնվածներին ինչ կասէք։

Վարդանին քարշ տուին երկու քայլ հեռու, մերկացրին և պառկեցրին, երեսը դէպի գետին։ Մի խսիր էր փռած սառը գետնի վրա։

Քսան հինգ հարուածի վրա Վարդանը ուշաթափվեց։ Կարծում էին, թէ նա մեռաւ։ Այստեղ միայն քարացած ամբոխը զգաստացաւ. կանայք ու երեխաները լաց էին լինում։ Տղամարդիկ բողոքում էին, իսկ նրանցից՝ ոմանք մէջ ընկան ու ոմանք զայրանալով, ոմանք խնդրելով աղաչելով՝ ստիպեցին դադար տալ պատժին։ Դալլաք Յարութը արաղով շփեց Վարդանի վէրքերը։ Յետոյ նրան շալակեցին ու տուն տարան։

Մուսլեան

տում ենք, որովհետև ամեն բան այդ մի քանիսի հունարով է միշտ գլուխ գալիս, միւսները.... Այս մասին յետոյ առիթ կունենանք խօսելու) պատրաստում են Թերթերին ուղարկելու «բուռն դժգոհութեան բողոք» Թիֆլիսի առաջնորդի հասցէին, որ մի ամսից ի վեր կառավարութիւնից ստացել է 9000 ր.՝ մեր դպրոցների անունով, բայց նամակով ու հեռագրով արված դիմումներին խաբելով է պատասխանել. դժգոհութեան արտայայտութիւն նոյնպէս պ. Ղ. Աղայեանցին և «Կենտրոնական գրավաճառանոցին», որոնք դեռ երկու ամիս առաջ խոստացան իսկոյն դասագիրք հասցնել, բայց և որոնք իրանց խոստումը չը կատարեցին, որի հետևանքով խանգարվեց դպրոցի կանոնաւոր դասաւանդութիւնը:

Այս դժգոհութեան «սարսափելի» արտայայտութիւն-բողոքին ուսուցիչներից կէսը հազիւ համարձակվեց ստորագրել... Երևի վախենում են, որ... որ սրբազան առաջնորդը չի մոռանայ այդ յանդգնութիւնը և եկող սեպտեմբերին իր հաշիւը կը մաքրի դրանց հետ: Լաւ հեռատեսութիւն է. շնորհաւորում ենք:

Թէ ինչն է առիթ տուել վերևում յիշված մի խումբ ուսուցիչներին մամուլի միջոցով արտայայտել այդ ձևի բողոք, շատ պարզ է. այդպէս անելու նրանց ստիպել է ամենից առաջ ամիսներից ի վեր պարապով ապրելու անտանելի, զզուելի դրութիւնը, որը կարծես իբրև ժառանգութիւն կապված է հայ ուսուցչին, բայց այս դէպքում առաջնորդի անբացատրելի վարմունքի պատճառով. այս շարժառիթից յետոյ գալիս են ուրիշ ոչ-պակաս կարևոր պատճառներ էլ, որոնք կապված են մեր դպրոցների առաջադիմութեան հետ:

Բողոքի այս ձևով թող մամուլը բարձրացնի իր հեղինակաւոր ձայնը, որով գուցէ մի քիչ թեթևանայ հայ ուսուցչի դրութիւնը և զգաստ ու պարտաճանաչ լինեն նրանք, որոնք, դժբախտաբար, մի թիւրիմացութեան տխուր հետևանքով իրանց ձեռքում են վերցրել դըպրոցների գործը իբրև թէ կանոնաւորելու: Առաջնորդը կամ կոնսիստորիան փողը կուշացնի, դասագիրք կազմողը և գրավաճառը կուշացնեն գրքերը, պօստը, ի հարկէ, երբէք լաւ չի տրամադրված դէպի դպրոցը. տարվայ կէսին ուսուցիչը կը հրաժարվի և տեղը պարապ կը մնայ, և այս ու սրա նման հազար ու մի մեծ ու փոքր արգելառիթ հանգամանքներում դպրոցական գործը խախտ հիմք է, որ առաջադիմելու ճանապարհը գտնի: Իսկ եթէ սրա վրա աւելացնենք «սեպտեմբերեան» գլուխ-գործոցները կամ խնամիական, բարեհայեցողութեան, բարեկամութեան, վստահելիութեան, մեր մարդկութեան, մերոնցութեան վկայականները, որոնցով ուսուցիչ է վարձվում մեր մատաղ սերնդի կրթական գործի համար, այն ժամանակ կարծեմ հասկանալի կը լինեն մեր առաջադիմութեան դանդաղութեան պատճառները: Չը մոռանանք մի անկիւնում յիշելու և ուսուցչի խոնարհութեան, հնազանդութեան, պարկեշտութեան, «դրուստ ես ասում, աղա» և այլն անգնահատելի արժանիքների մասին, որոնք շատ են փնտռվում մեզանում և էժանանում են սեպտեմբերին...

Սակայն վերջապէս երբ պէտք է վերանան այս բոլոր բացասական կողմերը, երբ պէտք է մեր դպրոցական գործերը ղեկավարվեն իսկական նկատումներով միայն, ոչ ուրիշ կերպ. երբ պէտք է վերջապէս ուսուցիչն էլ կանգնած լինի իր կոչման բարձրութեան վրա և թոյլ չը տայ շահագործել այնպիսի յատկութիւնները, որոնք երբէք ու երբէք չը պէտք է զարգացնել, մանաւանդ ուսուցիչ անհատի մէջ:

Մենք ակամայ շեղվեցինք մեր դպրոցների մի քանի կողմերի մասին էլ յիշատակելուց, դրանցից գլխաւորը դպրոցական օրգանիզացիայի դիսցիպլինայի թոյլ կողմն է: Բայց այդ մասին յետոյ:

Գալուստ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

(Դոկտոր Կ. Ց. Փաշայեան-խանի)

Բարոյական պարտաւորութիւն եմ զգում, թէ այս գիրքը կազմող բժիշկ Փաշայեանի առաջ և թէ դպրոցի կեանքով, առհասարակ, հետաքրքիր անձերի առաջ, մի քանի տողով տեղեկութիւն տալ գրքի բովանդակութեան և նիւթերի արժանաւորութեան մասին:

Գիրքը ընդարձակ է, 653 երես. հեղինակը չէ խնայել՝ ոչ իր ժամանակը և ջանքերը և ոչ տպարանի մեծ մեծ ծախքերը՝ որպէս զի իր գիրքը, լինելով ամենավերջինը մեր մէջ համանման բովանդակութեամբ, լինի առաջինը իր արժէքով: Եւ յիրաւի, հեղինակը իր աղբիւրների շարքում ունեցել է մեր մէջ երբ և իցէ երևացած գրականական նիւթերը և աչքի ընկնող եւրոպական՝ դոյն առարկային վերաբերեալ հեղինակութիւնները: Գրքի գինը վեց րուբլի է, բայց դժուար չէ կարծել, որ շատ չի անցնի, երբ նա կը դառնայ հազուագիւտ մի մատեան, որպիսին է այսօր Հայկակեան բառարանը, կամ Չամչեանի պատմութիւնը և այլ մեծածախք, բայց անհրաժեշտ առարկային գիտական շտեմարանները:

Ես, թէև բժիշկ, որին փոքր ի շատէ ծանօթ են դոկտոր Փաշայեանի արծարծած առարկաները, այնու ամենայնիւ մեծ բաւականութեամբ գլխէ գլուխ կարդացի այդ գեղեցիկ գիրքը: Ուսուցիչ է այդ, թէ ուսանող, ծնող և վերջապէս ամեն մի անհատ, որի միտքը դեռ չէ քնել և որի սէրը չէ պակասել դէպի իր ազգի նոր և նորագոյն սերունդը, որոնց հետ կապված է ազգի մերձակայ ապագայի կամքը և ուղղութիւնը, անհրաժեշտօրէն պէտք է ձեռք բերի այս գիրքը և կարդայ: Մանաւանդ որ գիրքը իր ճոխ բովանդակութեամբ, գիտական բարձր արժանաւորութեամբ և անհրաժեշտ գիտելիքներով միշտ իր թարմութիւնը պահպանելու ընդունակ է այսօր նոյն չափով, որքան և տասնեակ տարիներ յետոյ:

Գիրքը մանրամասնօրէն և պարզ ոճով, օժտված և նկարներով, ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է կառուցանել դպրոցի շէնքը, ինչ և ինչ ուսուցման մեթոդների ծրագրների հետևել, առողջապահական տեսակէտից դատելով, ինչ է երեխաների մտքի յոգնածութիւնը, քննութիւնները, թւանշան և այլն և այլն ամեն տեսակ ոչ միայն մարմինը, այլ և հոգին կազդուրող ակնարկութիւններ և խրատներ: Մի առ մի նկարագրված են երեխաների ֆիզիքական և հոգեկան պարտաւորութիւնները, դպրոցական ամեն տեսակ հիւանդութիւնները, մանաւանդ վարակիչ. այդ բոլորի հետ ցոյց են տրուած և նախնական դարմանները, չէ մոռացված և ուսուցիչների առողջապահութիւնը:

Ընթերցող, եթէ դու ունես մի քանի զաւակ, բայց մանաւանդ եթէ միայն մի զաւակ, այս գրքից այլ ևս ձեռք չես քաշիլ. քնի, թէ զարթնի երեխադ,—իսկոյն կը վազես բանալու այս գիրքը. արտմի, հիւանդանայ զաւակդ, խաղայ միայնակ, թէ ընկերների հետ, եղունգը կրծի, կամ ծխի և այլն և այլն, դու իսկոյն պէտք է վերցնես այս գիրքը, թէ տեսնենք ինչ է ասում Փաշայեանը...: Եւ չես սխալվի, և իմացիր, որ լաւ է ասում. այդ է իմ յանձնարարականը. և մեղքն ու վարձքը՝ իմ շլնքին:

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՄԷԿ ՆՈՐ ԼԵՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Նորերումս Վարշաւայում բացվել է մի ընկերութիւն, որը կոչվում է «Լեհական կուլտուրական ընկերութիւն», որի նպատակը առաջի ժողովում պարզել է յայտնի լեհական հրապարակախօս Աղէքսանդր Սվենտոխովսկին: Ընկերութեան նպատակն է՝ միացնել բոլոր լեհական կուլտուրական ընկերութիւնները, որոնք կապված չեն որևիցէ քաղաքական կուսակցութիւններով:

«Շատ ցանկալի է, որ մեր ընկերութեան ուշադրութիւնը և զօրութիւնը ամբողջովին չը գրաւվի քաղաքականութեամբ: Քաղաքականութիւնը շատ կարևոր բան է, բայց նա միշտ սպառնում է հասարակական մտքին ամլութեամբ: Չը պէտք է մոռանալ, որ քաղաքական իրաւունքներ շատ դժուար են տրվում այն ազգութիւններին, որոնք զուրկ են կուլտուրականութիւնից: Հարկաւոր է, որ քաղաքական պայքարի հետ երկրի ինտելիգենցիան մղէ և կուլտուրականը: Մեզ չի օգնի ոչ մի ինքնավարութիւն, ոչ մի աւտօնոմիա, մինչև անգամ անկախութիւն, եթէ մենք լցնենք նոր տիկերը հին գինով: Մարդկային ոչ մի ույժ չի կարող փչացնել մի ազգի գոյութիւնը, որը զօրեղ է իր կուլտուրայով. եթէ այդ ճիշտ է բոլոր ազգերի վերաբերմամբ, նամանաւանդ ճիշտ է մեր վերաբերմամբ, քանի որ ինքնապաշտպանութեան միակ միջոցը և նեցուկը ազգային կուլտուրան է»:

Շատ բնորոշ և խրատախորհուրդ և մեզ հայերիս համար:

Բ. Ա.

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Մոսկվայի երրորդ գիմնազիայում վերսկսվել են յուզմունքները: Պատճառը գիմնազիստ Տիխոմիրովի անձնասպանութեան պատճառով սկսված յայտնի յուզմունքներից յետոյ 32 աշակերտների արտաքսելն էր: Գիմնազիստների կարծիքով, 32 աշակերտների արտաքսումը տեղի է ունեցել առանց բաւականաչափ լուսաբանելու մեղաւորութիւնը:

—Լրագիրները անընդհատ մտայլ տեղեկութիւններ են հաղորդում մեր միջնակարգ դըպրոցների կեանքից: Այժմ արդէն սկսվել են կալանաւորութիւնները գիմնազիաների մէջ: Լրագիրները հաղորդեցին մի ամբողջ շարք այդպիսի կալանաւորութիւնների մասին Սարատովում: Նոյնը կրկնվում է ուրիշ քաղաքներում: «Вятск. Кр.» լրագիրը գրում է, որ դեկտեմբերի 3-ի գիշերը տեղական աշակերտների մէջ, գլխաւորապէս գիմնազիստների մէջ, ոստիկանութիւնը խուզարկութիւններ է կատարել: Աշակերտներից երկուսը կալանաւորված են. գրաւված են մի քանի անլեգալ բրօշիւրներ, թռուցիկներ, իսկ մէկի մօտ նոյնիսկ բրաունինգներ են գտել:

—Կազանից «Р. Сл.» լրագրին հեռագրում են, որ կալանաւորված է և բանտարկված գիմնազիստուհի Լիւդմիլա Զակրժևսկայա՝ յայտնի օպերային արտիստ Զակրժևսկու աղջիկը: Խուզարկութեան ժամանակ գտել են թռուցիկներ և տպագրական այլ իրեր:

—«Костромичъ»-ը հաղորդում է, որ դեկտեմբերի 9-ի գիշերը կալանաւորված է իր բնակարանում 8-րդ դասարանի գիմնազիստներից մէկը:

—Խարկովում փակված է րէալական դպրոցը, կոմերցիական դպրոցը. խլրտումներ կան արական և իգական գիմնազիաներում:

—Կանանց բարձրագոյն կուրսերում մի միջադէպ է տեղի ունեցել: Ուսանողուհիները գրութիւն են ներկայացրել կուրսերի խորհրդին՝ թոյլ տալ իրանց ընտրեալներին մասնակցելու խորհրդի նիստերին: Ուսուցիչների խորհուրդը, 23 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 22-ի, համաձայնութիւն է տուել ուսանողուհիների ցանկութեանը, բայց կուրսերի դիրեկտորը, դեկանները և պրոֆեսօրներից շատերը յայտնել են, որ այդ դէպքում նրանք հրաժարական կը տան կուրսերի դասաւանդողների թւից: Եթէ պրոֆեսօրները հրաժարվելու լինեն, կարող է այդ հանգամանքը վատ ազդել կուրսերի վրա, որովհետև այդ պրոֆեսօրների մէջ կան այնպիսիները, որոնք արդէն հռչակ են վայելում և յայտնի են իրանց գիտնական գործունէութեամբ և իրանց առարկաների դասաւանդութեան փորձառութեամբ: Ուսանողուհիները, իբրև այդ դրութիւնը ի նկատի առնելով, Մոսկվայի բոլոր բարձրագոյն դպրոցների ուսանողական ներկայացուցիչներից մի խորհուրդ են կազմում քննելու այդ խնդիրը:

—«Сегодня» լրագրին հաղորդում են Սարատովից, որ տեղական գիմնազիան, 120 աշակերտների արտաքսումից յետոյ, որոնք ամենից աւել վտանգաւոր էին համարվում, աւելի ևս յուզվեց: Ցանառ լուրեր են պտտում գիմնազիայի ժամանակաւորապէս փակելու մասին:

ՎԵՐՋԻ՞Ն ՀՐԱՀԱՆԳՆԵՐՆ ԵՆ

Ստոլիպինի մինիստրութիւնը գործում է համառօրէն: Նա ընտրել է մի նպատակակէտ, որին և ձգտում է. այն է՝ ստեղծել կառավարութեան համար հլու, հնազանդ Դումա:

Կը հասնի՞ իր այդ նպատակներին, թէ ոչ, այդ ուրիշ հարց է, իրողութիւնը այն է, որ նա հարթում է իր նախագծած ճանապարհը:

Դեռ ամիսներ առաջ յոյս էր դրել սև-հարիւրեակայինների ու աջակողմեանների վրա, սակայն հաւաքած տեղեկութիւնները չարդարացրին այդ յոյսը:

Դիմեց սենատի օգնութեանը և յեղաշրջեց ընտրողական կանոնները իր փափաքած նպատակի համար: Բայց իրականութիւնը և ժողովրդի տրամադրութիւնը, վերաբերմունքը մնաց նոյնը: Կառավարչական ագենտների զեկուցումների հիման վրա սահմանադրական սկզբունքների հետ խաղացող մինիստրութիւնը համոզվեց, որ Սենատի սահմանափակող մեկնութիւններն էլ անզօր են լռեցնելու բիւրօկրատական ռեժիմի չարիքների, արհաւիրքների դէմ կռւող գիտակից տարրերի բողոքը, գրաւելու ժողովրդի վստահութիւնը. նա համոզվեց, վերջապէս, որ ժողովուրդը հակառակ է կառավարչական քաղաքականութեանը:

Եւ, այլևս անկարող լինելով զսպելու իր բիւրօկրատական դայրոյթը, հանեց իր «սահմանադրական» դիմակը և բացարձակ կռիւ յայտարարեց ժողովրդին:

Սենատի մեկնութիւնների տպաւորութիւնը դեռ չանցած, լոյս տեսան ընտրողական գործը սահմանափակող նորանոր հրահանգներ, որոնց մէջ գլուխ-գործոցը պէտք է համարել դեկտեմբերի 11-ի հրահանգը:

Դրա համաձայն ընտրութիւնները թերթիկներով կատարելիս ընտրողները ստիպված պէտք է լինեն թերթիկները յանձնելուց անմիջապէս յետոյ դուրս գալ այն սենեակից, ուր ընտրութիւններն են կատարվում: Այդպիսով ընտրողները զրկվում են հնարաւորութիւնից անմիջական հսկողութիւն ունենալու ընտրութիւնների օրինաւորութեան վրա: Այդպիսով ազատ դուռ է բացվում ապօրինութիւնների համար:

Որքան էլ որ վստահելի ու անպայման ազնիւ լինեն ընտրողական մասնաժողովի անդամները, այնուամենայնիւ ապօրինութիւնների հաւանականութիւնը չէ վերանում դրանով, և անտեղի կը լինի անպայման վստահութիւն սպասել ընտրողներից: Ընտրողներն ու քաղաքական կուսակցութիւնները կարող են և իրաւունք ունեն անձամբ համոզվելու, որ թերթիկները տալիս և հաշւելիս ապօրինութիւններ չեն կատարվում:

Մինչդեռ Ստոլիպինը զրկում է ընտրողներին այդ իրաւունքից: Նա կանգ չառաւ մի այդպիսի միջոցի առաջ, չը նայելով որ նա միանգամայն դէմ էր հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ոգուն և իմաստին, վերջապէս դրանով ոտնահարվում են ընտրողական ամենատարրական սկզբունքները: Ի՞նչ երաշխաւորութիւն, որ վաղն էլ նոր հրահանգով չի առաջարկվելու ընտրութիւնները ոչ թէ գաղտնի, այլ յայտնի կերպով կատարելու մասին, որ չի առաջարկվիլ ազգաբնակութեանը ընտրելու այնպիսիներին, որոնք հաճելի են կառավարութեանը միայն:

Անհիմն չի լինի, եթէ մի այդպիսի ենթադրութիւն անելու լինենք: Չէ՞ որ հրահանգները գալիս են անընդհատ, ամենայն օր: Ահա դեկտեմբերի 17-ին էլ նոր հրահանգներ է տալիս աւելի ապշեցուցիչ, աւելի կամայական: Այդ հրահանգի հիման վրա բնակարանային ցենզի իրաւունքով ընտրութիւններին մասնակցելու իրաւունք չունեն «այն անձինք, որոնց վերաբերմամբ կը հաստատվի, որ դրանք, իրանց անունով բնակարան վարձելով, իսկապէս չեն ապրել քաղաքում վարձած բնակարանում վերջին տարին, թէև ժամանակաւոր ընդմիջումներով»: Իսկ ժամանակաւոր ընդմիջումներ ասելով «պէտք է հասկանալ սոսկ կարճատև բացակայութիւնները, ինչպէս օրինակ պաշտօնով արձակուրդ գնալը, կամ առևտրական գործերով մեկնելը» (դեկտեմբերի 21-ին ստացված հեռագրներում):

Մի այդպիսի կամայականութիւն մարդիկ կարող են թոյլ տալ իրանց միայն ծայրայեղ յուսահատութեան րոպէին. այդ զէնքը ուղղված է, գլխաւորապէս, այնպիսի ակտիվ օպպօզիցիոն ույժերի դէմ, որոնք կառավարութեան ագենտների ձեռքից ստիպված են եղել թագնվել կամ տարագրել ուրիշ տեղեր, որոնց թւում և Վիբօրգի կոչը ստորագրողների դէմ: Թւում է, որ սահմանադրական Ստոլիպինը իր այդ վերջին տատակով իր ջղաձգութիւններն է ապացուցանում: Կասկած չը կայ, որ այդ յուսահատ կռիւը ժողովրդի հետ երկար չի կարող տևել. տեղացող հրահանգները պարզ ապացոյց են, որ ներկայ ռեժիմը զգում է իր անզօրութիւնը:

Սակայն վերջի՞ն հրահանգներն են դրանք, թէ՞ էլի նոր սիւրպրիզներ պէտք է տայ Ստոլիպինը:

Լ. Դանիէլեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Ախալցխա, դեկտեմբերի 11-ին

Երէկ տեղի ունեցաւ առաջին ժողովրդական էժանագին ներկայացումը: Դերասան Յովհաննիսեանը մի քանի սիրողների հետ խաղաց Մօլիէրի «Տարտիւֆը» Կարապետեան դպրոցի սրահում. ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր քաղաքը շատ ետ մնացած է, կարելի է ասել շատ տեղին էր այդ ներկայացումը: Սրահը լիքն էր բացառապէս աշխատաւոր դասակարգի երիտասարդներով և պատանիներով. կանանց դասից երկու թէ երեք հոգի կային. անցեալ տարիներում այս ներկայացումները եղել են շատ անկանոն և վերջացել են անհամութիւններով, այնպէս որ կանայք միշտ զգուշացել են ներկայ լինել: Այդ պատճառով այս անգամին կանայք չը կային, բայց սպասածի հակառակ հասարակութիւնը իրան պահում էր շատ լաւ և մինչև վերջը ուշադրութեամբ հետևում էր խաղին: Չենք խօսի պ. Յովհաննիսեանի խաղի մասին. նա իր հարուստ միմիկայով և փորձված խաղով իսկոյն տարբերվում էր սիրողներից. սրանցից լաւ խաղաց պ. Բարսեղեանը՝ Օրգոնի դերը, թէև պարոնին այնքան էլ չէր սազում այդ զարմանալի աստիճանի միամտութիւնն ու ծայրայեղ ապուշութիւն արտայայտող դերը: Տիկին Յովհաննիսեանը ազնիւ ամբողջացած տիպ դուրս բերեց. վատ չէր և օր. Նալբանդեանը տիկին Էլմիրի դերում: Տոմսակների արժէքն 5—25 կոպէկ:

Մեր ժողովուրդը իր շնորհակալութիւնն է յայտնում դերասանին և սիրողներին: Ցանկալի է, որ այդ ներկայացումները պատահական բնաւորութիւն չը կրեն, այլ յաճախակի կազմվեն պարբերաբար, իրանց մէջն ունենան ներքին կապ և աստիճանաւորութիւն: Այսպէս աւելի օգտակար կը լինեն ժողովրդական ներկայացումները, իսկ անխնամ և պատահական, մինչև իսկ լաւ ներկայացումները հետք չեն թողնի: Հէնց այդ պատճառով անհրաժեշտ է կազմել միութիւն, յաճախակի ներկայացումներով զբաղվող, մի կանոնաւոր սիրողների խումբ:

Ինչպէս նախորդ թղթակցութեանս մէջ գրել էի, արդէն այդ ուղղութեամբ ձգտում նկատվում էր ուսուցիչներից մի քանիսի և սիրողների մէջ. սակայն դրանցից մի քանիսի ոչ պատուաւոր վարմունքի պատճառով գործը կիսով չափ տուժեց և խառնվեց: Ուսուցիչների գումարած ընդհանուր ժողովում մի քանի սիրողներ ներկայացուցիչ հանդիսացան ինչ-որ սիրողների խմբի և արձանագրութիւնն ստորագրեցին, որ պէտք է աշխատեն միանալ և վերջ տալ անմիտ հակառակութիւններին. սակայն բանից դուրս եկաւ, որ նրանց ընկերները այդպիսի լիազօրութիւն չեն տուել դրանց. յետոյ և առանձին ժողովով անհաշտաւէր տրամադրութեամբ որոշումներ են կայացրել ուսուցիչների այնքան օգտակար ձեռնարկների դիմաց: Այս ոչ վայել վարմունքից միւս սիրողները ուսուցիչների հետ նոր ընդհանուր ժողով գումարեցին և ընտրեցին 5 հոգուց կազմված մի մարմին, որի գործը պիտի լինի մի համառօտ կանոնադրութիւն կազմել և սկսել տալ մի շարք ժողովրդական ներկայացումներ. գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին օր. Վ. Աւետիսեան, պ. պ. Եարղեան, Մ. Աստուածատրեան, Գ. Իսքէնտէրեան և Գ. Յովսէփեան:

Տեսնենք այս խումբը ինչ չափով կարդարացնի մեր յոյսերը: Այս գործը աւելի արժանի է ուշադրութեան, քան ուրիշը, և սրա շուրջը պիտի խմբվեն միւս կարող ույժերն էլ:

Գալուստ

II

Դերբենտ, դեկտեմբերի 17-ին

Մի խումբ տիկինների, օրիորդների և հայ ուսումնարանական խմբի կազմակերպած երեկոյթը, որը տեղի ունեցաւ շաբաթ երեկոյեան, դեկտեմբերի 16-ին, հասարակաց ժողովարանի դահլիճում, մի աւելորդ անգամ ևս եկաւ ցոյց տալու այն մտաւոր սնանկութիւնը, որ երևան հանեցին մեր ղեկավարող ու մասնակցող անձինք:

Երեկոյթի ծրագիրը կազմած էր շքեղ և շլացուցիչ կերպով, նորութիւններ որքան կամենաք. փօղրվիլ, խմբական քառաձայն երգեր, ոտանաւորներ, կենդանի պատկերներ, ասիական պարեր, վիճակախաղ և, ապա, Բերկրեցի բանաստեղծ, Բերկրեցի երգիչ, բերկրեցի ներկայացնող, բերկրեցի, բերկրեցի, բերկրեցի... ու անվերջ բերկրեցի.

Ներկայացումը և խմբական երգերն ծիծաղ էին յարուցանում, կարգ ու կանոնի բացարձակ բացակայութիւն, մի խօսքով իսկական արևելեան բազար: Նիւթականի կողմից երեկոյթը աջողութիւն ունեցաւ:

Առիթից օգտվելով չենք կարող մատնացոյց չանել և մի այլ հանգամանքի վրա. հայոց ուսումնարանի հոգաբարձութիւնը այս տարի հրաւիրել է և մի ուսուցիչ խմբապետ ծանր գնով. սակայն մինչև օրս եկեղեցական խումբ չունենք:

Մի բան ուրախալի է, որ պ. Բերկրեցին քաջութիւն էր ունեցել, մեր յայտնի կոմպօզիտօրների՝ Եկմալեանի, Կարա-Մուրզայի ներդաշնակած երգերը, որ այդ երեկոյթին երգում էր խումբը, սեփականացնելով իրան, գրել ներդաշնակ. Բերկրեցու:

Երիտասարդ

—

Մեզ հաղորդում են, որ Հաւլաբարի թատրոնում շաբաթ, դեկտեմբերի 23-ին, դերասան պ. Տէր-Դաւթեանը բարեհաճ մասնակցութեամբ Հայկական խմբի դերասանուհիների և դերասանների կը ներկայացնի Գ. Սունդուկեանի «Պէպօ» կոմեդիան 3 գործ.:

«Մշակի»-ի № 278-ի «Թատրոն և երաժշտութիւն» բաժնում մի սխալ է մտել, որը շտապում ենք ուղղել. տպված էր, որ խմբական երգերը մշակված էին՝ պ. Միրզոյեանի ղեկավարութեամբ. պէտք է լինի պ. Քէշիշեանի ղեկավարութեամբ:

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՑ

Քահանաների կրկնամուսնութեան հարցը յուզվում է և Թիւրքիայում: Պօլսի ճնշված մամուլը խօսում է ի նպաստ այդ րէֆօրմի, իսկ Բօսֆօրի ափերի վրա բազմող Կրօնական ժողովը դէմ է և, որպէս զի լռեցնէ մամուլի ձայնը, հրաւիրել է ազգային լրագրների խմբագրներին, խրատելու, յորդորելու, որպէսզի «Հայ եկեղեցւոյ հիմնական վարդապետութեանց և հաւատալեաց դէմ» հրատարակութիւններ չը լինեն թերթերում և հանդէսներում:

Առաջ ենք բերում այն բնորոշ տեսակցութիւնը, որ տեղի է ունեցել Կրօնական ժողովի և հայ խմբագիրների միջև:

Ծանուցին մեր անցեալ Դչ. օրուան թիւով թէ Կրօնական ժողովը հրաւիրած է Հայ խմբագրապետները, յանձնարարելու համար որ Հայ Եկեղեցւոյ հիմնական վարդապետութեանց ու հաւատալեաց դէմ հրատարակութիւններ չըլլան թերթերուն ու հանդէսներուն մէջ:

Երէկ մի քանի խմբագիրներ անձամբ պատասխանեցին Կրօն. Ժողովոյ հրաւէրին, յարգելով Ազգ. Վարչութեան բարենպատակ մէկ անօրինութիւնը: Թերթ մը բացակայ մնաց, ուրիշ մը գրով պատասխանեց. Լրագրոյս Տնօրէնն անձամբ ներկայացաւ: Նոյն պահուն ժողովասրահն եկան նաև «Մասիսի» և «Արևելքի» խմբագիր Տիգրան էֆ.: Ներկայ էին Ժողովոյ հինգ եպիսկոպոս անդամները և վարդապետ անդամները. իսկ քահանայ անդամներէն մի քանին և Տ. Մկրեան Հայրը չէին եկած:

Ատենապետ Տ. Մեսրոպ Արք. սիրալիր ընդունելութիւն ընելով, և նստելու համար աթոռ մը ցոյց տալով իր բովը, խօսք տուաւ Մանկունի Սրբազանին, հրաւէրին շարժառիթը բացատրելու:

Տ. Վահրամ Արք. Մանկունի.—Ինչպէս արդէն տեղեկացաք, խնդիրը պարբերաբար թերթերու մէջ երևցած այնպիսի հրատարակութեանց վրա է որք համաձայն չեն Հայ Եկեղեցւոյ վարդապետութեանց: Տեսանք կղերականներ որք խնդիր յարուցին զոյգափոխութեան վրա, լատին բառ մը՝ մեր Եկեղեցւոյն անծանօթ, կասկածի տակ ձգեցին Աստուածամօր վերափոխումը, Սրբոց նշխարները, մասունքը, պատկերներու յարգանքը, ևն., ևն.: Եղան նաև Խաչի պաշտօնին դէմ խօսողներ, և Տեառն Մերոյ ամուսնութեան վրա խօսքեր գրուեցան որք կրնային ծուռ մեկնուիլ: Ընթերցողներուն մէջ մեծագոյն մասը կը կազմեն միամիտներ որք կրնան մոլորիլ այսպիսի վէճեր տեսնելով Եկեղեցւոյ հիմնական վարդապետութեանց շուրջ: Մենք կը ճանչնանք զձեզ, կը գնահատենք ձեր օգտաւէտ հրատարակութիւնները, գիտենք ձեր ոգին և ուղղութիւնը, դուք ալ կը զգաք մեզ պէս թէ մեր Եկեղեցին մեր բարոյական գոյութեան էական սատարն է: Ուստի, կը խնդրենք ձեզմէ որ օգնէք մեզ, ժողովրդեան մէջ վառ պահելու համար հաւատքն ու բարեպաշտութիւնը, և եթէ երբեք այնպիսի գըրուածներ գան կղերականներէ թէ աշխարհականներէ կողմէ որոց կրօնային պարունակութեան համար կասկած ունենաք թէ ուղիղ չեն ներկայացներ մեր Եկեղեցւոյ հաւատալիքները, մասնագէտներու ցոյց տաք, կամ մեզ ղրկէք ի քննութիւն: Զայս կըսենք ոչ թէ հրամայելով, ոչ թէ կաշկանդելու համար գրիչը, այլ խնդրելով և հայրաբար յանձնարարելով, զի Եկեղեցին մեր ամենուս է, և ամենքս ալ պարտք ունինք և բարոյական շահ ունինք հոգ տանելու որ գայթակղութիւն յառաջ չը գայ բարեմիտ ժողովրդեան մէջ:

Բէչեան էֆ.—Իբրև երիցագոյն խմբագիրն հայ օրաթերթերուն մէջ, ամենուն ալ զգացման թարգման ըլլալ կը կարծեմ՝ շնորհակալութիւն յայտնելով պատկառելի Կրօնական Ժողովոյդ գովելի հոգածութեան համար: Ամենքս ալ կը փափաքինք որ Կրօն. Ժողովը կարելին ի գործ դնէ ի պահպանութիւն Հայ Եկեղեցւոյ, որ մեր հոգևոր և բարոյական ամենէն սիրելի ստացուածքն է, և ամենուս պարտքն է օգնել Կրօն. Ժողովոյ սոյն արգիւնաւոր գործին: Մնաց որ, դարձեալ բոլոր Մամլոյ կողմէ խօսելով, կըսեմ թէ ահա երեսուն տարիէ ի վեր որ Մամլոյ ծառայութեան մէջ կը գտնուիմ, և միշտ օրաթերթերու մէջ գրեր ու աշխատեր եմ, բայց չեմ յիշեր ոչ թերթ մը, որ պայքար մղած ըլլայ Հայ Եկեղեցւոյ հիմնական հաւատալեաց դէմ: Ամեն խմբագիր հաւասարապէս հաւատացեալ չէ անշուշտ, բայց ոչ մէկ խմբագիր երբէք բարոյական կամ նիւթական օգուտ մը կրնայ տեսնել Հայ Եկեղեցւոյ վարդապետութեանց դէմ պայքար մղելու մէջ: Ընդհակառակն, կը յիշեմ պարբերաբար գրուած յօդուածներ ի ջատագովութիւն Հայ Եկեղեցւոյ, օտար խմբծանքներու դէմ: Օրինակի համար, ես հիմակուան տարիքիս կէսն անգամ չունէի տակաւին երբ 1879-ի և 1880-ի օրաթերթ «Մասիսին» մէջ կարգ մը յօդուածներ գրեցի ի պաշտպանութիւն Հայ Եկեղեցւոյ, այն ատեն երևան եկած կարգ մը միսիօնարական յարձակումներու դէմ: Հոգելոյս Տ. Ներսէս պատրիարք այն ատեն զիս հրաւիրեց և քաջալերեց:

Տ. Գրիգորիս Արք. Յովհաննէսեան.—Այո, կը յիշեմ այն ատեն Բէչեան էֆ.-ի գրածները «Մասիսի» մէջ: Ես Կալկաթա էի նոյն պահուն: Հոն կը ստանայի «Մասիսը»: Ես միշտ գոհունակութեամբ կարդացեր եմ իր գրածներն ի պաշտպանութիւն Հայ Եկեղեցւոյ: Իր գրիչը ծանօթ է մեզ: Բայց երբեմն անուշադրութեամբ այնպիսի հատուածներ ալ կրնան սպրդիլ որոց ծուռ մեկնութիւն տրուիլը կիմանանք քահանաներէն, որք տուները կը մտնեն և ժողովրդեան ամեն խաւերուն մէջ կը թափանցեն, և երբ անոնցմէ կիմանանք թէ այս կամ այն մտօք հրատարակութիւն մը գայթակղութիւն յառաջ բերեր է, ի հարկէ չենք կրնար անտարբեր մնալ: Այս է պատճառը մեր հոգածութեան: Ապա թէ ոչ, Մամլոյն մատուցած բարոյական և իմացական ծառայութիւնները կը գնահատենք, և ամենևին չենք փորձեր մեր կողմէ ոևէ արգելք սահմանել այս կարգի նիւթերու համար:

Բէչեան էֆ.—1879-էն ասդին, իմ զգացումներս չեն փոխուած իմ Եկեղեցւոյս հանդէպ, և ամեն անգամ որ պապական կամ բողոքական կողմէ շարժառիթ տրուեր է, չեմ խուսափած վիճաբանութենէ: Բայց երբ 30—40 սիւնակ գրեք զուտ կրօնական խնդրոյ մը վրա, և ձեր դէմն ունենաք այնպիսի մէկն որ լաւ անձնական շարժառիթներով շիտ փնտռէ ձեր աչքին մէջ, կամ կարծեցեալ մոլորութիւն՝ ձեր ո և իցէ մէկ տողին մէջ, հարկաւ այն հազարաւոր տողերուն մէջէն կրնայ բառ մը իր մտքը փաթթելով գայթակղական խօսքեր շինել գրել: Վերջապէս, աստուածաբանութիւն է այս. դուք քան զիս քաջ գիտէք. բառերու վրայօք դարերով վիճեր են, ծուռ մեկնութիւններով հատորներ լեցուեր են ամեն ժամանակ: Ուստի, ոչ միայն գրողներէն պէտք է խնդրենք որ զգոյշ լեզու գործածեն ամեն ժամանակ, այլ և խիղճ և խելք մաղթենք չարամիտ մեկնիչներուն: Օրինակի համար. այս անգամ Հայ հռոմէական բարեկամ մը քննադատեց Հայ Եկեղեցւոյ պատուական ամուսնաւոր քահանայութիւնը, և ամուրիութիւնը միայն բաղձալի վիճակ ցոյց տալու համար, խնդրոյ նիւթ բրաւ Տեառն Մերոյ ամուսնացած չըլլալը: Այսպիսի անհարկի ձեռնարկութիւն մը հերքելու համար, հարցուցի թէ ինչէ՞ն գիտէք որ Յիսուս չէր կարգուեր եթէ աւելի երկար ապրեր, և աւելցուցի իր ամուսնութեան անկարելիութիւնը, քանի որ աշխարհիս վրա Աստուածային սերունդ մը ձգելու նպատակը չուներ: Միևնոյն գրութեան շարունակութեան մէջ, գրեր եմ նաև թէ աններելի էր որ Յիսուս կարգուէր իր Աստուածային հանգամանքով, և վերջաւոր յօդուածին մէջ ալ, բոլոր փաստերուն ամփոփման առթիւ, հարցուցեր եմ իրեն թէ ինչպէ՞ս կուզէք որ Յիսուս կարգուէր, քանի որ Աստուածորդի էր: Արդ, բոլոր այս բացատրութիւններէն կարելի էր միթէ հետևցնել թէ «Բիւզանդիոն» Տեառն Մերոյ ամուսնութեան դէմ գրեր էր:—Անշուշտ ոչ:—Եւ սակայն, այսպէս մեկնեց այնպիսի մէկն որուն անձնական հակառակութիւնը զիս բոլորովին անտարբեր կըթողու, բայց եթէ գայթակղութիւն կրնար ծագիլ, այնպիսի անտեղի մեկնութենէ մը միայն կրնար ծագիլ, ոչ թէ սկզբնական գրուածքէն, ոչ թէ իմ իսկ գրածէս: Մինչև որ մէկը շահ չունենայ միամիտ ընթերցողին «աչքը բանալու» և ըսելու «Հա՛, աղէկ նայէ, հոս հերետիկոսութիւն կայ, հոս մեր հաւատքին դէմ խօսեր է», ընթերցողն ինչ պէտք ունի մոլորում նշմարելու ուր որ անանկ բան ոչ գրուածքին մէջ կայ, ոչ մտքէն անցեր է գրողին: Ասոր համար է որ կըսեմ թէ գրողներէն աւելի մեկնիչներուն խիղճ և լըջութիւն պէտք է մաղթել:

Տ. Մեսրոպ Ար.—Մենք առանձինն զձեզ միայն չհրաւիրեցինք: Մասնաւորապէս ձեր գրածներուդ չէ որ կըզբաղինք: Մենք բոլոր խմբագրապետները ալ հրաւիրեցինք: Անշուշտ, ծուռ մեկնողներուն ալ պէտք է յորդոր կարդանք գայթակղութիւն չը պատճառելու: Անոնց ալ պիտի խօսինք ի հարկէ:

Տ. Սահակ Ա. Քահանայ.—Իսկ ես կ՚փափաքէի մասնաւորապէս ուշադրութիւն հրաւիրել նիւթապաշտ (մատերիալիստ) գրուածներու վրայ կարգ մը նոր գրողներու, որք եւրոպական գիտութեան հովեր կառնեն, և քօղարկեալ ոճով մը նիւթապաշտ սկզբունքներ կըքարոզեն, չմտածելով որ նիւթապաշտութեան վարկը բոլորովին կոտրած է այսօր Եւրոպայի մէջ, նոյն իսկ Գերմանիոյ մէջ անոնք հինցած մօդան անցած գրութիւններ են, և սխալ է բոլոր Եւրոպան իբր անկրօն ցոյց տալ:

Բէչեան էֆ.—Ճիշտ այդ խնդրոյն վրայ Խմբագրական մ՚ունիմ «Բիւզանդիոնի» այսօրուան թիւին մէջ, ուր ջանացեր եմ ցոյց տալ թէ իրաւունք չունինք Ֆրանսայի հակակղեր պայքարէն հետևցնելու թէ Եւրոպա անկրօն ընթացքի մը մէջ է ծայրէ ի ծայր: Օրինակ բերեր եմ Անգլիայէն, ուր ընդհակառակն կուղղուի ա՛լ աւելի ապահովել և կանոնաւորել կրօնային-բարոյական ուսումն ու կրթութիւնը դպրոցներու մէջ:

Տ. Գրիգորիս Արք.—Օրհնեա՛լ ըլլաք: Մենք շատ կախորժինք այնպիսի օգտակար գրուածքներէ:

Տ. Սահակ Ա. Քահանայ.—Եւ սակայն, եթէ իմ զաւակս կարդայ թերթերու մէջ երևցած այնպիսի նիւթապաշտ յօդուածներ, մտքին մէջ կասկածը մուտ կը գտնէ, և օրին մէկը բոլորովին կը խախտի իր հաւատքը: Ո՞րչափ աւելի տխուր, անուս ամբոխին հաւատքը: Ուստի, իմ մասին, կուզեմ կոչում ընել լրագրութեան որպէս զի նորելուկ գրիչներու այն մտօք գրածները զանց առնուին, կամ աղէկ մը քննուին առաջուց:

Բէչեան էֆ.—Բայց, վերջապէս, հաշուենք անգամ մը թէ մեր խօսքն որու կուղղուի: Պոլսոյ մէջ հրատարակուած չորս-հինգ հայ թերթերուն ամբողջ գնորդներն ու կանոնաւոր ընթերցողները 10—12,000 հոգիի մէջ կըբովանդակուին: Ժողովրդի մը մէջ այսչափ փոքրիկ մաս մ՚է որ կանոնաւորապէս կըստանայ մեր թերթերը, և հարկաւ տգէտ, անուս ամբոխը չէ որ կը կազմէ այս ընթերցող դասակարգը: Աւելի կամ նուազ դպրոց, ուսում տեսած, զարգացած մտքի տէր անձինք են, ընտրուած դասակարգ մ՚են, և պէտք է վստահ ըլլանք քիչ շատ թէ անոնք կարող են գրուածներուն իմաստը կշռելու դատելու: Ձեր ակնարկած ձկնորսներուն ու նաւավարներուն նախ և առաջ Տէրն մեր քարոզեց, այն միայն կրցաւ դարձի բերել զանոնք, և հիմա մեր քահանայ Հայրը պաշտօնն է զբաղիլ անոնցմով: Իսկ լրագրական գործն աւելի իմացական գործ է:

Տ. Վահրամ Սրբազան.—Բայց թէև մէկ հոգի կարդայ, տասն հոգի կըսէ թէ գայթակղական բան մը գրուեր է թերթին մէջ, որով բերնէ բերան կըտարածուի ժողովրդին նաև այն խաւերուն մէջ ուր մուտ չէ գտեր լրագիրը:

Բէչեան էֆ.—Ուստի և կըսեմ ու կը կրկնեմ թէ չարիքը միայն գրողներու քով չէ, այլ ա՛լ աւելի՝ ծուռ մեկնողներուն քովն է:

Տ. Գրիգորիս Սրբազան.—Մեր խնդրածն ուրիշ բան չէ բայց եթէ քիչ մը աւելի ուշադրութիւն այնպիսի գրուածներու որք խնդիր կրնան յարուցանել Եկեղեցւոյ հիմնական վարդապետութեանց շուրջ: Այս մասին զանազան ժամանակներ խօսուեր է մեր Վարչութեան ժողովներուն մէջ, և մենք միշտ յարգեր ենք Մամլոյ ծառայութիւնները, և բնաւ չենք դժուարացուցած իր գործն Եկեղեցւոյ, Ազգ. Վարչութեան, դպրոցներու և հանրային հաստատութիւններու համար իր գրածներուն նկատմամբ:

Բէչեան էֆ.—Եւ անշուշտ կրօնային հաւատալիքի կամ վարդապետութեան խնդիր չի նկատուիր երբ թերթերը կըխօսին Ազգ. Վարչութեան ժողովներուն ու Խորհուրդներուն զանազան որոշումներուն ու տնօրինութիւններուն վրայ, զանոնք գնահատելով, բացատրելով, լուսաբանելով, երբեմն ալ դիտողութեան առարկայ ընելով:

Տ. Վահրամ Սրբազան.—Ո՛չ, խնդիր չունինք այն մասին, բաւական է որ ամեն ինչ բարի մտքով ըլլայ: Ընդհակառակն, կօգտուինք ալ:

Բէչեան էֆ.—Կրկին անգամ ուրեմն մեր շնորհակալիքը կըյայտնենք ձեր բարեխնամ հոգածութեանց համար: Ձեր յանձնարարութիւններն իբրև հայրական պատուէրներ սիրով կընդունինք ամենքս ալ:

Տ. Մեսրոպ Արք.—Եւ մենք շնորհակալ ենք ձեր ներկայութեան համար: Օրհնեալ ըլլաք: Տէր ընդ ձեզ:

Սրբազան Ատենապետին հրամանով, Մամլոյ երկոքին ներկայացուցիչք սուրճով մեծարուեցան ժողովասրահին մէջ:

(«Բիւզանդիոն»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմա-դաշտային դատարանը, քննելով Կաֆիբովի խանութից զէնքը ձեռքին փող կողոպտելու համար մեղադրվող Գրիգոր Դալաքանեանի գործը, նրան մեղաւոր է ճանաչել և դատապարտել է 20-ամեայ տաժանակիր աշխատանքի:

—

Պետական Դումայի ընտրութիւնների հարցով զբաղվող Թիֆլիսի գաւառական մասնաժողովը, քննելով դեկտեմբերի 19-ին Թիֆլիսի նահանգապետի վերաբերմունքը դէպի գաւառի զանազան տեղերում, մանր հողատէրերից և կամ եկեղեցականներից լիազօրներ ընտրելու համար նախնական համագումարներ կազմելու հարցը, որոշել է՝ կազմել նախնական համագումարներ 1) Թիֆլիս քաղաքում, Դիգօմի, Ծաւկիսի, Ցխնէտի, Խատիս-Բէլէթի, Աւճալի, Օլգինսկի և Մալօէ-Լիլօ գիւղերի և Ալէքսանդրօֆ գաղութի շինական հասարակութիւնների սահմաններում հող ունեցող կամ ապրող անձանց համար, 2) Մարիէնֆէլդ գաղթավայրում, Սարդաճալի և Կարաեազի ոստիկանական մասերում, բացառութեամբ աւճալեան հասարակութեան, Օլգինսկի և Մալօէ-Լիլօ գիւղերում և Ալէքսանդրօֆ գաղութի սահմաններում ապրող անձանց համար և 3) Պրիւտ (Ելիսաւէտինսկօէ) գիւղում, Թիֆլիսի գաւառի 1-ին ոստիկանական մասում ապրող անձանց համար, բացառութեամբ 1-ին կէտում յիշատակած շինական հասարակութիւնների։

—

Թիֆլիսում մահմեդականների ժողովարան հիմնելու հարցը մօտենում է լուծման։ Կիրակի նշանակված է մահմեդականների ժողով առանձին մասնաժողով ընտրելու, որին կը յանձնարարվի ժողովարանի համար բնակարան գտնել, անհրաժեշտ ինվենտար ձեռք բերել և այլն։

—

Դեկտեմբերի 19-ին, երեկոյեան ժամը 9-ին, Կախետինսկի փողոցում Գ. Շահնազարեանի գինետուն են մտել 3 անյայտ չարագործներ և, գանձարկղից վերցնելով 90 րուբլի փող, արծաթէ գօտի և 2 արծաթէ ժամացոյց 40 րուբլի արժողութեամբ, անյայտացել են։

—

Դեկտեմբերի 19-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Միքայէլեան հիւանդանոցն են տարել, բութ գործիքով մի քանի տեղից վիրաւորված մի անյայտ մարդու, որը, բժշկի ասելով, շատ արբած լինելով ոչ մի բացատրութիւն չը կարողացաւ տալ, թէ ով է իրան վիրաւորել, և շուտով ուշաթափվեց։ Քննութիւնը պարզեց, որ նա Թելաւեցի Աբէլ Ցարութիւնեանն է, բայց ով և ով վիրաւորեց նրան, յայտնի չէ։

—

Երևանի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել, որպէսզի Ղամարլու գիւղի նախկին պօստի կայարանի շինութիւնը տրվի տեղական Թուրքական միդասեան դպրոցին։

—

Բագւի ժամանակաւոր գեն.-նահանգապետը թոյլատրել է պարսկահպատակ Միրզա Ալի Մահամէդ-Խան Օվէյսկին հրատարակել Բագւում պարսկերէն մի թերթ «Ազանգ» (Ճշմարտութիւն) անունով։

—

Դեկտեմբերի 18-ին Բագւում լոյս տեսաւ նոր երկուշաբթի օրվայ լրագիր «Бакинскій Досугъ» վերնագրով։

—

Նաւթարդիւնաբերողների վերջին համագումարին կայացել է Բագւի քաղաքապետին կից կազմվելիք խորհրդի անդամների ընտրութիւնը։ Ինչպէս յայտնի է, քաղաքապետութեան վերաբերեալ տրված կանոնադրութեան համաձայն, նաւթարդիւնաբերողները խորհրդում պէտք է հինգ ներկայացուցիչ ունենան, որով հայերի և մահմեդականների թիւը պէտք է հաւասար լինի։ Խորհրդի անդամներ են ընտրվել մահմեդականներ՝ պ. պ. Ռուստամբէկով և Իբրահիմ-բէկ Հաջինսկի, հայեր՝ պ. պ. Ա. Ղուկասեան և Պարոնեան. 5-րդ ընտրեալը պ. Լիսն է։ Թեկնածուներ մատնանշվել են. մահմեդականներ պ. պ. Իրզաեվ և Իբրահիմ-բէկ Սաֆար-Ալիեվ, հայեր պ. պ. Տէր-Միքայէլեան և Վաչեան. չէզոք պ. Հաուզէն։

—

Բագւի զինուորական նաւահանգստի հրամանատար գեներալ-մայոր Սկալօվսկին զինուորական իշխանութիւնից հրաման է ստացել այն մասին, որ Բարձրագոյն ուկազով, քաղաքին մերձ Բայիլով գաղթավայրը մտցրած է Բագւի քաղաքի ցանկի մէջ, ենթարկելով այդ գաղթավայրը Բագւի հասարակական ինքնավարութեան և քաղաքային ոստիկանութեան ընդհանուր հիմունքով, սակայն այն պայմանով միայն, որ ծովային վարչութեանը պատկանող հաստատութիւնները, շինութիւնները և հողաբաժինները առաջվայ նման նրա սեփականութիւնը մնան, իսկ նրանցից նրանք, որոնք անմիջական կերպով ծառայում են այդ վարչութեան կարիքներին, — լինեն միայն ծովային մինիստրութեան տնօրինութեան ներքոյ։

—

Դեկտեմբերի 13-ին, երեկոյեան ժամը 7-ին, Պետերբուրգի ոստիկանութեանը յայտնել են, որ կայսերական տեխնիքական ընկերութեան Կօրնիլօվի անուան նուիրված դպրոցում նախընտրողական ապօրինի ժողով է տեղի ունենում, որին ներկայ են 600 հոգուց աւելի մարդիկ և որոնց թւում կան կանայք ևս։ Ոստիկանութիւնը եղելութեան մասին հաղորդել է քաղաքապետին։ Դպրոցը իսկոյն շրջապատում են գօրօդօվօյներով, ժանդարմներով և ստրաժնիկներով։ Պրիստաւը իր օգնականի հետ միասին ներս է մտնում և ժողովականներին բոլորին կալանաւորված յայտնում։ Ապա սկսում են ցուցակագրել ներկայ եղողներին։ Ցուցակագրումը տեւում է մինչև ուշ գիշեր։ Բանից երևացել է, որ մասնակցողների մեծ մասը զանազան գործարանների բանւորներ են եղել։ Ցուցակագրվածների մի մասը, մօտ 10 հոգի, մի քանի կանանց հետ միասին ուղարկել են տեղական ոստիկանամասերը պահակների հսկողութեամբ։ Միւսներին էլ տեղաւորել են զանազան ոստիկանատներում։

—

Ինչպէս յայտնի է, գեներալ Լինևիչին մտադիր էին արձակել ծառայութիւնից Սիբիրում գործադուլային կօմիտէի հետ բանակցութիւն վարելու պատճառով։ Սակայն յետոյ այդ գործը յանձնել են զինուորական խորհրդին կից կազմված առանձին ատեանին քննելու։ Վերջինս եկել է այն եզրակացութեան, որ Լինևիչը միանգամայն ուղիղ է վարվել բանակցելով նրանց հետ պահեստի զինուորների փոխադրութեան համար, դրդված անհրաժեշտութիւնից, և որի համար նա արժանի է ոչ թէ պատժի, այլ շնորհակալութեան։ Թէ ինչ վախճան կունենայ այդ զեկուցումը, յայտնի չէ, որովհետև զինուորական մինիստրը համաձայն չէ ատեանի եզրակացութեան հետ։ («Рѣчь»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Անգլօ-ռուսական համաձայնութիւնը Պարսկաստանի վերաբերմամբ.—Եւրոպական թերթերը խիստ վստահելի աղբիւրից հաղորդում են, որ ծրագրված անգլօ-ռուսական համաձայնութիւնը, 1904 թ. ապրիլի 4-ի անգլօ-ֆրանսիական համաձայնութեան նման, բաղկանում է մի շարք այնպիսի խնդիրների փոխանակութիւններից, որոնք երկու ազգութիւնների միջև գժտութեան պատճառ են դարձել։ Այդպիսի խնդիրների կարգին են պատկանում գլխաւորապէս Տիբետի հարցը և անգլիական ու ռուսական շահերը Պարսկաստանում և Աւղանստանում։ Ասում են, որ Տիբետի վերաբերմամբ որոշ համաձայնութիւն արդէն կայացել է. իսկ Աւղանստանի և Պարսկաստանի հարցերը, որոնք բաւականին ծանրակշիռ և լուրջ բնաւորութիւն ունեն, գուցէ մի քանի ամսից լուծումն ստացած լինեն։

Անգլիական շահերը Պարսկաստանում գլխաւորապէս կ՛ենտրոնանում են Սէիստանի նահանգում։ Այդ նահանգը գտնվում է Ռուսաստանի՝ դէպի Հնդկական Ովկիանոսը հասնելու ամենակարճ ճանապարհի վրա և շատ պտղաբեր ու սակաւ ազգաբնակութիւն ունեցող մի երկիր է։ Սէիստանը ներկայումս ծառայում է որպէս ճանապարհ Պարսկաստանի և Հնդկաստանի միջև կատարվող վաճառականական փոխադրութիւնների, ուր, հակառակ արհեստականապէս յարուցված զանազան արգելքների, վաճառականութիւնը գնալով աճում է։

Ռուսաստանի համար Սէիստանը կարևորութիւն կունենար միայն այն ժամանակ, երբ ռուսները Հնդկաստանը գրաւելու նպատակ ունենային։ Բայց քանի որ Ռուսաստանն այդպիսի մի նպատակ չունի և Անգլիան էլ համոզված է այդ բանին, ուստի ենթադրվում է, որ Սէիստանը բրիտանական ազդեցութեանն է ենթարկվելու, և, հետևաբար, Ռուսաստանն այլևս յոյս չը պիտի տածէ Պարսից Ծոցի նկատմամբ։

Եթէ Սէիստանը բրիտանական ազդեցութեան տակ մտնէ, այդ դէպքում Խորասանն էլ, որ 15 տարուց ի վեր գրեթէ ռուսական մի նահանգ է, Ռուսաստանին պիտի պատկանի։ 17 տարի առաջ, արդէն, Մէշէդում ռուսները ընդհանուր-հիւպատոսութիւն հաստատեցին, որպէսզի կարողանան այդպիսով իրանց ազդեցութիւնն ամրացնել այդ նահանգում։ Բացի Խորասանից, ռուսական ազդեցութեան շրջանակի մէջն են ընկնում և Ատրպատականի, Գիլանի ու Մազանդարանի նահանգները։

Ռուսաստանը պնդում է, որ ինքը, որպէս հարևան, իրաւունք ունի մասնաւոր առանձնաշնորհումներ վայելելու Պարսկաստանում, մանաւանդ որ իր սահմանները Արարատից սկսած մինչև Սուրաթարաղ շօշափում են Շահի պետութեան սահմանները։

Այն հանգամանքը, որ ռուսները հիմնել են Պարսկաստանում Պարսից Զեղչման Բանկը, Էնզէլի-Թէհրան Խճուղին, Պարսկական Փոխադրութեան Ընկերութիւնը, ինչպէս և ռուսական փոխատուութիւնը Շահի կառավարութեանը՝ Ռուսաստանին իրաւունք են տալիս գերակշիռ մի դիրք վայելելու Պարսկաստանում։

Դեռ ևս Աւղանստանի խնդրի մանրամասնութիւնները չեն քննված։ Բայց կարծվում է, որ դրա լուծումն աւելի հեշտ է լինելու, քան Պարսկաստանինը։

Անգլօ-ռուսական համաձայնութիւնը Թիւրքիայի վերաբերմամբ.—Ինչպէս յայտնի է, ռուսական արտաքին գործերի մինիստր Իզվօլսկու՝ Եւրոպայում կատարած ճանապարհորդութիւնն առիթ է տուել եւրոպական թերթերին աւելի յաճախ խօսելու Ռուսաստանի ու Անգլիայի միջև կայանալիք հաւանական համաձայնութեան մասին։ Ֆրանսիական թերթերը մատնանշում են այն հանգամանքը, որ երկու մեծ երկրների էլ օգուտը պահանջում է որոշ փոխադարձ զիջումներ անելով մի համաձայնութիւն կնքել, չէզոքացնելու համար Գերմանիայի ոտնձգութիւնները Թիւրքիայում, Պարսկաստանում և Եգիպտոսում։

Մինչև վերջերս, քանի դեռ Կ. Պօլսի աւստրօ-ունգարական դեսպանն էր Կալիչէն, աւստրօ-ունգարական դիւանագիտութիւնը մի տեսակ [illegible] էր ծառայում Գերմանիայի քաղաքականութեանը և խոչընդոտ հանդիսանում անգլիական ազդեցութեանը։ Իսկ այժմ, երբ Աւստրօ-Ունգարիայի ներկայացուցիչն է Կ. Պօլսում մարկիզ Պալլավիչինին, «Le Courrier Européen»-ը կարծում է, որ դեսպանական այդ նոր փոփոխութիւնը Աւստրօ-Ունգարիայի քաղաքականութեանը՝ դէպի Թիւրքիան՝ մի բոլորովին նոր ուղղութիւն է տալու։

Թիւրքիայի վերաբերմամբ Աւստրօ-Ունգարիայի մինչև այժմ բռնած ընթացքը չէր հակասում և ռուսական շահերին, որովհետև Ռուսաստանը ցանկանում էր statu quo-ն պահպանված տեսնել Թիւրքիայում։ Բայց այժմ հիմքեր կան յուսալու, որ Ռուսաստանի արտաքին գործերի նոր մինիստր Իզվօլսկին չէ հակառակվելու, եթէ Անգլիան այսուհետև վճռողական քաղաքականութեան դիմէ Թիւրքիայի հարցերում։ Իսկ ֆրանսիական դիւանագիտութիւնն արդէն, ինչպէս յայտնի է, ոյժ է տալիս անգլիական քաղաքականութեանը։ «Արդ,—ասում է «Le Courrier Européen»-ը,—անգլիական դիւանագէտները թշնամի են այդ statu quo-ին, որը հակառակում է ոչ միայն իրանց շահերին, այլ և Բ. Դրան հպատակ ժողովուրդների՝ քաղաքակրթութեան նկատմամբ ունեցած նոյնիսկ ամենադոյզն ձգտումներին»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 դեկտեմբերի։ Դեկտեմբերի 17-ին Թագաւոր Կայսրը բարձրագոյն հրամայել է ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ գաղտնի խորհրդական Մօրօզովին կատարել մինիստրի օգնականի պարտականութիւններից մի քանիսը և ներկայ լինել մինիստրի փոխարէն Սենատի նիստերին և պետական բարձր հաստատութիւններում։

ԴԱԿԿԱ (Բէնգալիա)։ Այստեղ, Հնդկաստանի բոլոր շրջաններից եկած 3000 ներկայացուցիչների մասնակցութեամբ նիստեր գումարող մահմեդականների համագումարը վճռել է մուսուլմանական շահերը պաշտպանելու և Հնդկաստանի մահմեդական ազգաբնակութեան լօյեալ յարաբերութիւնները բրիտանական կառավարութեան հետ ուժեղացնելու, ինչպէս և ապստամբութեան առաջն առնելու համար։

ԼՕՁ, 19 դեկտ.։ Չիբէրօվսկի գործարանային վարչութիւնը 4000 րուբլի է խոստացել ինժեներ Օստալէվսկու և վարպետ Պօլկօվսկու մարդասպաններին գտնելու համար։ Դեկտեմբերի 18-ին քաղաքի մի քանի փողոցներում ծանր վիրաւորված են 4 բանւոր։

ՍԱՐԱՏՕՎ, 19 դեկտ.։ Քաղաքային դուման միաձայն որոշել է Սարատովում համալսարան բանալու դէպքում յատկացնել մէկ միլիօն րուբլի։

ՄԱԴՐԻԴ, 20 դեկտ.։ Լրագիրների ասելով, Ալժէզիրասի կօնֆերենցիայի իսկական ակտերը արխիւին յանձնելուց անմիջապէս յետոյ, արտաքին գործերի մինիստրը հեռագրով պատուիրել է սպանիական դեսպանին Բէռլինում, որ նա, կօնֆերենցիայի վերջնական նիստի որոշման համաձայն, պաշտօնապէս դիմէ շվէյցարական կառավարութեան խնդրելով՝ նշանակել ոստիկանութեան գեներալ-տեսուչ Մաղեօկկօյին, որ սա համապատասխան միջոցներ ձեռք առնէ, որով թերևս հնարաւոր լինի Մարօքկօի պետական բանկին վերաբերվող վէճերը լուծել Շվէյցարական դաշնակցական դատարանով։

ՉԻՍՏՕՊՕԼ, 20 դեկտեմբերի։ Զեմստվային վարչութեան մէջ 20,000 րուբլու վատնումն է երևացել։ Կասկածը ընկնում է գանձապահ վարչութեան անդամ Կացարիի վրա։ Սպասվում է մեծաղմուկ գործ։

21 դեկտեմբերի

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ, 20 դեկտեմբերի։ Թիֆլիսի դատաստանական պալատի վճռով դատապարտվել են. Պեատիգօրսկում հրատարակվող «Народная Правда» լրագրի խմբագիր Տրոյեբէն՝ մէկ և կէս ամսւայ բանտարկութեան, «Грозненскій Листокъ»-ի խմբագիր Խարկովի համալսարանի պրիվատ դօցենտ Խարիչենկօվը—երկշաբթեայ բանտարկութեան։

ՄՕՍԿՎԱ, 20 դեկտեմբերի։ Յայտարարված է Ֆիդլէրեան գործի դատավճիռը, որով դատապարտվում են. Դիէմը 2-ամեայ բանտարկութեան, Իվանօվը՝ 1 տարի և 8 ամիս բանտարկութեան, Լուրէն, Նազարօվը և Դէրվօիգօվը՝ 1 տարի և 6 ամսով։ 78 մարդ արդար են ճանաչվել։

ՎԱՐՇԱՒԱ, 20 դեկտեմբերի։ (Պաշտօնական թղթակցից)։ Դեկտեմբերի 18 ին, Դոմբրօվա-Գօրնայա կայարանի վրա յարձակում գործեց մի աւազակախումբ, որը, զինաթափ անելով պահապան զինուորին, կողոպտեց գանձարկղից 2388 րուբլի և անպատիժ անյայտացաւ։

ՍԱՄԱՐԱ, 20 դեկտեմբերի։ Կեղծ ընկալագրով տեղական փոխադարձ վարկի ընկերութիւնից ստացված է 11,500 րուբլի։

ԼՕՁ, 20 դեկտեմբերի։ Երէկ, կուսակցական հողի վրա սպանվել են երկու բանւոր, վիրաւորվել՝ հինգ հոգի։

ԿԱՄԵՆԵՑ-ՊՕԴՕԼՍԿ, 20 դեկտեմբերի։ Անկուսակցական ռուս մարդիկ ժողով գումարելով վճռել են միացնել բոլոր անկուսակցական ռուսներին։

ՎԱՐՇԱՒԱ, 20 դեկտեմբերի։ Պատերազմադաշտային դատարանի վճռով երեք հոգի դատապարտվել են կախաղանի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 դեկտեմբերի։ Պաշտօնական։ Ներքին գործերի մինիստրը նահանգապետներին ուղարկել է հետևեալ հրահանգագիրը. «Պետական Դումայի անցեալ ընտրութիւնները կատարելու ժամանակ, կայսրութեան մի քանի տեղերում, շրջանների կողմից ընտրված լիազօրների համագումարները, թեկնածուներին անհետևանք մի շարք քուէարկումներից յետոյ, պատուիրակների ընտրութեանը ձեռնարկում էին վիճակահանութեամբ։ Մինչդեռ, Պետական Դումայի ընտրութիւնների առիթով հրատարակված կանոնների 111-րդ յօդուածի համաձայն, շրջանների կողմից ընտրված լիազօրների համագումարներին պատուիրակների ընտրութիւնը պարտաւորապէս պէտք է կատարվի գաղտնի քուէարկութեամբ, գնդակներով քուէարկելով, որով, համաձայն 113-րդ յօդուածի, լիազօրների համագումարների պատուիրակներ ճանաչվում են այն անձինք, որոնց օգտին տրված է համագումարին մասնակցող ձայների կէսից աւելին, են, ստացված ձայների մեծամասնութեան կարգով, և, միայն վերջինների հաւասարութեան դէպքում, ընտրութիւնը որոշվում է վիճակահանութեամբ։ Ի նկատի առնելով այս, Պետական Դումայի ընտրութեան ժամանակ, շրջանների կողմից ընտրված լիազօրների համագումարներին, պատուիրակներ մատնանշելու նկատմամբ, ապօրինի ընտրութեան կարգից խուսափելու համար, առաջարկում եմ ձերդ գերազանցութեան, տեղեկացնել յիշեալ համագումարների նախագահներին, որ յիշեալ պատուիրակները, օրէնքի համաձայն, պարտաւորապէս պէտք է ընտրվեն գաղտնի քուէարկութեամբ, գնդակներով քուէարկելով, և որ շրջանների լիազօրների համագումարներին, բայց ձայնատուութեամբ՝ ընտրութիւնները կատարելու մի այլ որևէ ձև անխուսափելիօրէն պատճառ կը դառնայ անկանոն կերպով ընտրվողների նկատմամբ, ընտրութիւնների վերացման։ Ընդսմին, այս բոլորի մասին խնդրեմ հաղորդել Պետական Դումայի ընտրութիւնների հարցով զբաղվող նահանգական և գաւառական մասնաժողովներին»։

ԲԵՐԼԻՆ, 20 դեկտեմբերի։ Բիւլօվը դիմել է սօցիալ-դեմօկրատիայի դէմ կռւող դաշնակցութեան նախագահ Լիբէրին մի նամակով, որի մէջ մատնանշում է, որ նա յենվել է կենտրոնին, նախ քան սրա՝ պարլամենտում ունեցած իր դրութիւնը ի չարը գործ դնելը։ Սակայն, լիբէրալ քաղաքացիների հայեացքներում փոփոխութիւն է տեղի ունեցել։ Դէպի սօցիալ-դեմօկրատները տածած անբարեկամութիւնը օրէցօր աճում է և հազիւ թէ ընտրութիւնները բաւականաչափ միացած լիբէրալ մի կուսակցութիւն կազմեն, բայց կարելի է, որ ազատամիտները (свободомыслящіе), ազգային լիբէրալները և աջակողմեանները մեծամասնութիւն կը կազմեն ռէյխստագում։ Կռիւը պէտք է ուղղվի սօցիալ-դեմօկրատների, լեհերի և կենտրոնի դէմ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ.
ԽՈՍՐՈՎ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ կանանց համար 12—1 ժամը։

Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Գասկեվիչի փողոցների,, № 33/15։

(տ. օ.) 77—100

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. իւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ց. Գուրգենօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

„ԳՈՒՏԵՆԲԵՐԳ“
Գրավաճառանոցի հրատարակութիւն
Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած
начальная русская
христоматія
для армянъ
դասաւանդութեան բացատրութիւններով
1. գրքոյկ

Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածվել նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմակ. դպրոցի առաջին դասարանում։

1—10

Գէորգեան ճեմարանի
Ա. լսարանի
ՄԻ ՈՒՍԱՆՈՂ

(մի տարի ուսուցչութիւն արած) ուսուցչութեան պաշտօն է փնտռում հայոց դպրոցներում։ Դիմել՝ Эчміадзинъ, Академія Потеянцу.

1—5

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

I

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր., 10 ր. և աւելի, նայած կազմին։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։

ՅԱՐՄԱՐ ՆՈՐ ՏԱՐՈՒ ԸՆԾԱՆ ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՄԻՆ

II

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ

Լոյս տեսաւ ԵՐԿՐՈՐԴ պրակը։ Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առաջին բառարանի բաժանորդների և գնորդների համար 4 ր., Թիֆլիսում դիմել «Գուտտենբերգ» գրախանութին, իսկ գաւառներից պէտք է ուղղակի հեղինակին դիմել. ТиФлисъ. А. Дагбашяну.

III

Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագինը 2 ր. 50 կոպ.։

Ծանօթ. Յաւելուածը ուշ լոյս կը տեսնի։ Բառարանը պիտի կազմել տալ։ Բագւի և Բալախանու բաժանորդներն 9 րդ պրակը կը ստանան «Сотрудникъ» գրախանութից։

2—2



Ի ՎԱՃԱՌ
ԲԱՐԴ. ՅՈՎՀ. ԱՐԱՔԱՅԵԼԵԱՆ
ԼՃԻ ՏԱԿ
ՎԷՊ
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

տ. օ. 3—10

Լոյս տեսան
Մ. ՁՄՇԿԵԱՆԻ
1907 Թ. ՕՐՑՈՅՑՆԵՐԸ

Ցանկացողները՝ աւելի զիջում ստանալու համար դիմում են հետևեալ հասցէով. Թիֆլիս, Գարաչևսկի № 5, Մակար Ձմշկեան։

Ե. Շ. 13—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 6—100

Լոյս տեսա. և վաճառվում է
„ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ“
կազմ. ՆԵՏԱՐ
Բովանդակութիւն

1) Սեռական գիտելիքների անհրաժեշտութիւնը. 2) Գիտելիքներ սեռական կեանքի մասին. 3) Սեռական գործարաններ. 4) Սեռական կեանքի գործողութիւնները. ա) Երազախաբութիւն, բ) Դաշտան, գ) Սեռական յարաբերութիւն, դ) Յղիութիւն, ե) Ծննդաբերութիւն. 5) Յաւելուած.—Երեխայի խնամատարութիւնը. գինն է 20 կոպէկ։ Գումարով գնողներին 30% զեղչ։ Երևանից դուրս 20% զեղչ. ճանապարհածախսը մեր հաշւին. Դիմել Типографія Х. Айвазянца.

(2.) 4—5

Открыта подписка на 1907 годъ
На общественную литературную и политич. ежедневн. газету
„КАВКАЗСКАЯ РѢЧЬ“

Газета «Кавк. Рѣчь» выходитъ въ Тифлисѣ каждый день, кромѣ дней послѣ праздничныхъ «Кавк. Рѣчь»—газета внѣпартійная независимая, прогрессивная.

Въ «Кавк. Рѣчи» помѣщаются иллюстраціи къ событіямъ дня, портреты обществен. и государствен. дѣятелей и Каррикатуры художника О. И. Шлинга.

Подписная цѣна: Въ Тифлисѣ—1 годъ—6 руб., полгода — 3 р., четверть года — 1 р. 75 к. 1 мѣс.—60 к.

Въ розничной продажѣ въ Тифлисѣ отд. № «К. Рѣчи» ТРИ КОП.

Въ другіе города: 1 годъ—7 руб., полгода—3 руб. 50 коп. четверть года—2 р., 1 мѣс. 75 к.

За границу: 1 годъ—10 руб., полгода 6 руб. четверть года—4 руб.

Подписавшіеся теперь же на весь 1907 годъ или на 6 мѣсцевъ получаютъ газету со дня подписки до 1-го января тек. года БЕЗПЛАТНО.

Для годовыхъ и полугодовыхъ подписчиковъ **разсрочка:** при подпискѣ 2 р. и послѣ каждаго мѣсяца по 1 рублю.

Сельскія и дешевыя библіотеки, благотворит. учрежденія, учащіеся, сельск. учителя и учительницы, рабочіе пользуются 10 проц. скидки съ подписной цѣны при непосредств. обращеніи въ главн. контору. Въ кредитъ и налож. платежомъ газета не высылается.

Подписка принимается въ главной конторѣ изданія: Тифлисъ, Дворцовая улица, домъ Грузинскаго Дворянства. Ред.- изд. М. Джабаръ

1—2

Բացված է բաժանորդագրութիւն
1907 թ.
„ՋԱՅՆ“
Քաղաքական, հասարակական եւ տնտեսական շաբաթաթերթի

«ՋԱՅՆ»-ը պիտի պաշտպան հանդիսանայ և արտայայտիչը լինի արդիւնաբերական և գիւղացիական բանւորների դասակարգային շահերի, քաղաքական և տնտեսական կեանքում։

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

ԹԻՖԼԻՍՈՒՄ		ԹԻՖԼԻՍԻՑ ԴՈՒՐՍ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ	
Տարեկան	3 ր. —	Տարեկան	3 ր. 50 կ.	Տարեկան	4 ր. 50 կ.
Կէս-տարի	1 ր. 60 կ.	Կէս-տարին	2 ր. —	Կէս-տարին	2 ր. 50 կ.
Ամսական	30 կ.	Ամսական	35 կ.	Ամսական	45 կ.
Համարը	7 կ.	Համարը	8 կ.		

ԲԱՆՒՈՐՆԵ՛Ր, ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՒԵՑԷՔ ՁԵՐ ԹԵՐԹԻՆ!

Հասցէն՝ Тифлисъ, редакція «Дзайнъ», Малая-Ванкская, № 4. Արտասահմանից՝ Tiflis, rédaction du «Dzaïn», Malaja-Vankskaja № 4.

1—3 Խմբագիր՝ Տ. ԽՍԱԽԱՆԵԱՆ Հրատարակիչ՝ Մ. ԴՕԼՈԼԽԱՆԵԱՆ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Հայոց Ազգագրական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսնող
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Պատկերազարդ եռամսեայ հրատարակութեան
1907 թ. բաժանորդագրութիւնը

ԾՐԱԳԻՐ 1. Տեղագրութիւն. 2. Պատմական տեսութիւն. 3. Մարդաբանական հետազօտութիւններ. 4. Վիճակագրական տեղեկութիւններ. 5. Հնագիտական հետազօտութիւններ. 6. Ազգագրական, լեզուագրական և հասարագիտական հետազօտութիւններ. 7. Տնայնագործութեան, պարապմունքի և գիւղացիների տնտեսական դրութեան մասին ուսումնասիրութիւններ. 8. Ժողովրդական հաւատք. 9. Սովորութական իրաւունք. 10. Բանաւոր գրականութիւն. 11. Ժողովրդական երաժշտութիւն. 12. Մատենախօսութիւն և 13. Յայտարարութիւններ։

Իւրաքանչիւր գիրքը բաղկանում է 10—14 տպագրական թերթից։

Աշխատակիցները անպայման վարձատրվում են։

Առաջին գիրքը անշուշտ լոյս կը տեսնի յունվարիս կզբին

Բաժանորդագինն է { Ռուսաստան. տարեկան 5 ր. կէս տարին 3 ր.։
Արտասահման » 13 ֆր. » 7 ֆր.

Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել խմբագրատանը Саперная № 5. Դիմել՝ Въ редакцію журнала Азгагракань Андесъ. Тифлисъ կամ Rédaction de la Revue Azgagracan Handess.

Ազգագրական Հանդէսի I—XIV գրքերը վաճառվում են խմբագրատանը 21 ր. մի գիրքը՝ 1 ր. 50 կ. ճանապարհածախսով։

1906 թ. տարեկան սակաւաթիւ բաժանորդները կը ստանան այս 1907 թ. առաջին կիսամեակի գրքերը, որովհետև դեֆիցիտը մեծ լինելու պատճառով հնարաւոր չեղաւ այդ 1906 թ. երկրորդ կիսամեակի գրքերը հրատարակելու։

6—7

Արդէն թարգմանել եմ

1) Ստ. լը Շարի «Ледоходъ» դրամա 5 գործ.
2) Վասիլեվի, «Что такое отечество».
3) Օ. Միրբօի, «Ժան Ռուլ», դրամա 5 գործ.
4) Ան.-սկի, «Семидесятникъ», պիէս 1 գործ.

Ներկայացման, գնելու կամ հրատարակելու համար դիմել՝ Анапа, Щводу.

Մարտիրոս Տէրոյեան Շւոդ
1—5

Սրանով յայտարարում եմ

ի գիտութիւն բոլորի, որ իմ եղբայր ԼԵՒՈՆ Տ.-ՄԱԿԱՐԵԱՆԸ ինձ հետ իր հաշիւները բոլորովին վերջացրել է և ես այլ ևս պատասխանատու չեմ նրա պարտքերին, որը կարող է վերցնել զանազան մարդկանցից։

1—3 Աստուածատուր Տ.-Մակարեան

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

ընդունում եմ կանանց և երեխաների զգեստների պատուէրներ վերջին տարազով։ Պատուէրները կատարվում են շուտ, ճաշակով և աժան։ Ներսիսեան փողոց 9. Թումանօվայի № 2։

3—4 (Ե. Ու. Կ.) ԻՄՆԱՋԷ

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կազբեկսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազբեկսկի փողոցից № 2

(տ. օ.) 97—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
ՏԵԼԵՖՕՆ № 1087
Սօլօլակ, Լերմոնտօվսկայա փող., 16.
(տ. օ.) 75—150

ԲԱԶՄԱՎԷՊ

Հանդէս ս. Ղազարու Հայկական Ճեմարանի իր 64-րդ տարւոյն մէջ, հզօրագոյն թափով պիտի մասնակցի ազգային գրական վերածնութեան։ Աշխատակցին հայ և եւրոպացի ճեմականներ։ Ազգային-բանասիրական բաժնէն զատ կը ներկայացնէ բանաստ. վէպեր, բնախօսական հատուածներ, տեղեկագիրներ՝ ազգային նորութիւնց վրայ։ Իր նպատակն է բարձրացնել ազգին անհատները՝ իբր Մարդ և իբր Հայ՝ ըլլալ միութեան կէտ մը ռուսահայ և տաճկահայ, ազգային և Եւրոպական գրականութեանց միջև. զարգացնել մասնագիտութիւնը, առանց ուրանալու ժողովուրդը։ Տարեկան գին՝ 4 րուբլի։ Դիմել Rédaction de la Revue «Bazmaoeb» Venise, (Jtalie) S. Lazare։

(Ե. ու.) 7—10

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Ղզլարի հայոց ծխական դպրոցների համար երաժշտական պատրաստութեամբ մի հմուտ երգեցողութեան

ՈՒՍՈՒՑԻՉ

20 դասով, որը պիտի պատրաստէ նաև եկեղեցական քառաձայն խումբ և վարէ խմբապետի պաշտօնը։ Ռոճիկը յունվարի 1-ից մինչև յունիսի 15-ը 500 րուբլի։

Ի դիմաց հոգաբարձութեան՝
Մ. Մոլթանեան

ԱԳՈՒԼԻՍԻ համար հարկաւոր է
ԲԺԻՇԿ

Պայմանների համար թող դիմեն ինձ Ագուլիսում։

Տանուտէր Վերին-Ագուլիսի՝
Եղիազար Տէր-Միքայէլեան

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճաճանիձէի № 36
39—100

Տ. Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆԸ
թարգմանում է
Л. Андреевъ-ի
„ВЪ ТУМАНѢ“
Պատմուածքը
4—4

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5